ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Մարիամ Մուրադյան, Սերինե Ավետիսյան
Տաթևիկ Աբրահամյան, Կարին Սթայվերս

ՆԵՐԱՌՈՒՄ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

Երեխաների իրավունքների ուսուցման ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 373:347.63:7(07)
ԳՄԴ 74.2+67.404.53+85g7
Ն 610

ԽՄԲԱԳԻՐ՝ Մարիամ Մուրադյան
ԳՐԱԽՈՍՆԵՐ՝ Վահան Բադալյան, Մարիամ Պետրոսյան, Լիլիթ Գրիգորյան
ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամ, «Փոքր թատրոն» գեղագիտության ազգային կենտրոն, «Լուսէ վերականգնողական կենտրոն» հիմնադրամ

Ներառում արվեստի միջոցով: Երեխաների իրավունքների ուսուցման ձեռնարկ / Ն 610 Մ. Մուրադյան, Ս. Ավետիսյան, Տ. Աբրահամյան, Կ. Սթայվերս, ԵՊՀ, 2023.- 70 էջ:

Երեխաների իրավունքների ուսուցման ձեռնարկը հնարավորություն է տալիս «Արվեստ» առարկայի ուսուցիչներին իրավունքի բովանդակությամբ տարբեր գործնական աշխատանքների միջոցով հասնելու առարկայական վերջնարդյունքների ապահովմանը:
Այն նախատեսված է հանրակրթական դպրոցների ուսուցիչների, ինչպես նաև թեմայով հետաքրքրված այլ մասնագետների համար:

ՀՏԴ 373:347.63:7(07)
ԳՄԴ 74.2+67.404.53+85g7

ISBN 978-5-8084-2634-4

© ԵՊՀ հրատ., 2023
© Եվրոպական ուս. կենտրոն, 2023
© Հեղ. խումբ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

ԹԵՄԱ 1. Բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու իրավունք..... 11

Գործնական աշխատանք 1.1. - Արտահայտենք մեր հույզերը 12

Գործնական աշխատանք N 1.2. - Հույզերը/ զգացմունքները բնական են..... 14

Թեմա 2. Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունք 16

Գործնական աշխատանք N 2.1.- Ես պատկանում եմ իմ ընտանիքին..... 17

Գործնական աշխատանք N 2.2.- Իմ ընտանիքն իմ կոլաժում..... 18

ԹԵՄԱ 3 . Երեխայի կրթության իրավունք 21

Գործնական աշխատանք N 3.1.- Իմ երազանքի կրթությունը/ դպրոցը..... 22

Գործնական աշխատանք N 3.2. - Կրթական անհատական զարգացման պլան..... 23

ԹԵՄԱ 4 .Հանգստի և ժամանցի իրավունք 27

Գործնական աշխատանք N 4.1. - Մի քիչ հանգստանանք 28

Գործնական աշխատանք N 4.2. - Ես իրավունք ունեմ հանգստանալու..... 30

ԹԵՄԱ 5. Առողջության և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունք 33

Գործնական աշխատանք N 5.1. - Գնա՞նք խանութ 34

Գործնական աշխատանք N 5.2. - Ինչպե՞ս օգնել 40

Թեմա 6- Երեխայի՝ տնտեսական շահագործումից և զարգացումը խոչընդոտող ու վտանգավոր աշխատանքից պաշտպանված լինելու իրավունք 43

Գործնական աշխատանք N 6.1. – Ավելին, քան կարելի է 44

Գործնական աշխատանք N 6.2. - Մի երեխայի պատմություն..... 47

Թեմա 7- Երեխայի վերականգման և վերաինտեգրման իրավունք 49

Գործնական աշխատանք N 7.1. - Վանկերով պար 50

Գործնական աշխատանք N 7.2. - Առաջ արի 51

Թեմա 8- Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունք..... 54

Գործնական աշխատանք 8.1. - Հետևիր ինձ 55

Գործնական աշխատանք 8.2. - Շրջակայքի խուզարկուներ..... 57

Թեմա 9- Զինված հակամարտություններից պաշտպանված լինելու իրավունք..... 59

Գործնական աշխատանք 9.1. - Պատերազմից խաղաղություն 60

Հավելված 1. Նախավարժանքներ..... 62

Summary. Inclusion through art: child rights education toolkit 64

Резюме. Инклюзивность посредством искусства: пособие по обучению правам детей 65

Գրականություն 66

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսուցիչ,

Այս ձեռնարկը կօգնի կազմակերպելու Ձեր աշխատանքն ավելի հեշտ, սահուն ու հետաքրքիր:

Երեխաների իրավունքները արվեստի միջոցով: Երեխաների իրավունքների ուսուցման ձեռնարկը ստեղծվել է կարևոր հասկացությունների հիման վրա՝ **ներառականություն, երեխաների իրավունքներ և արվեստ:**

Ձեռնարկի բովանդակությունը կազմվել է հանրակրթական նոր չափորոշիչների տրամաբանությամբ և օգնում է ձևավորելու սովորողների մեջ այնպիսի կարողություններ, որոնք սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչով (այսուհետ՝ ՀՊՉ): Հաշվի առնելով, որ ՀՊՉ-ն սահմանում է «Արվեստ» ինտեգրված առարկայի ներդրում հիմնական կրթական աստիճանում, որը նորույթ է հանրակրթական դպրոցների, ինչպես նաև ուսուցչական համայնքի համար՝ ակնհայտ է, որ այս հարցում ուսուցիչները աջակցության կարիք ունեն: Ձեռնարկում տեղ գտած թեմաների բովանդակությունը համապատասխանում է նախապես սահմանված նպատակին և վերջնարդյունքներին, որոնք ապահովելու համար յուրաքանչյուր թեմայի շրջանակում հեղինակները առաջարկում են առնվազն երկու գործնական առաջադրանք: Առաջադրանքների պարագայում ևս սահմանվում են նպատակը, անհրաժեշտ նյութերի ցանկը, ինչպես նաև այն տարիքային շեմը, որի համար առաջադրանքը կիրառելի է:

Կարևոր է հիշել, որ ձեռնարկը ու հատկապես այնտեղ տեղ գտած գործնական աշխատանքները ճկուն են, և հաշվի առնելով դասարանի կարիքները, ինչպես նաև սովորողների առանձնահատկությունները՝ վարժությունները կարելի է փոփոխել՝ պահպանելով **ներառականության, համատեղ ստեղծման և երեխաների իրավունքների ուսուցման** սկզբունքները:

Գործնական առաջադրանքներում կարևոր տեղ է զբաղեցնում դրանց առավելագույն հասանելիությունը բոլոր սովորողներին՝ անկախ իրենց կարողություններից: Նկատելի է, որ բոլոր վարժանքները հիմնված են ներգրավվածության վրա: Կարևորվել է յուրաքանչյուր սովորողի համար հոգեբանորեն ապահով, հանգիստ և անկաշկանդ պայմաններ ստեղծելը: Ուսուցման գործընթացը հիմնված է յուրաքանչյուր սովորողի հոգեբանական առանձնահատկությունների, կարողությունների և դրանց առավելագույն ներառման վրա: Սովորողը դառնում է ուսուցման

գործընթացի անմիջական և ակտիվ մասնակիցն ու ստեղծողը: Համատեղ ստեղծման կարևոր նպատակը առաջադրանքները ամբողջ խմբով կատարելն է այնպես, որ որևէ սովորող սահմանափակված չլինի մասնակցելու ուսուցման ընթացքին: Համատեղ ստեղծման ընթացքում պետք է.

- հնարավորություն տալ սովորողներին փոխանակելու իրենց փորձառությունը,
- պատրաստ լինել մշտապես արձագանքելու և համապատասխանեցնելու աշխատանքի ընթացքը սովորողների կարիքներին,
- դիտարկել իրավիճակները հնարավորինս բազմակողմանի՝ խուսափելով ստանդարտ ձևաչափերից,
- խրախուսել սովորողների ակտիվությունը և ներգրավվածությունը:

Ի սկզբանե արվեստը դիտարկելով որպես ներառող առարկա և նպատակ ունենալով ուժեղացնել արվեստի դերը հանրակրթական դպրոցներում՝ ձեռնարկի բովանդակությունը կազմվել է երեխաների իրավունքների հիմքով, իսկ բովանդակության մատուցման հիմնական գործիք է ընտրվել արվեստը, ուստի ձեռնարկը ուսումնասիրելիս կնկատեք «Արվեստ» առարկայի չափորոշիչում սահմանված չորս հիմնական հասկացությունների առկայությունը յուրաքանչյուր թեմայում, որոնք են՝ **ստեղծումը, ներկայացումը, արձագանքումը և կապակցումը:**

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ) հոդված 29-ում նշվում է, որ երեխաների կրթությունը պետք է օգնի նրանց լիարժեք զարգացնելու իրենց անհատականությունը, տաղանդներն ու կարողությունները: Այն պետք է սովորեցնի երեխաներին ճանաչելու իրենց իրավունքները և հարգելու ուրիշների իրավունքները, մշակույթներն ու տարբերությունները: ԵԻԿ կոմիտեն իր Ընդհանուր մեկնաբանություն թիվ 12-ի 108-րդ կետում նշում է, որ մարդու իրավունքների կրթությունը կարող է ձևավորել երեխաների մոտիվացիաներն ու վարքագիծը միայն այն դեպքում, երբ մարդու իրավունքները կիրառվում են այն վայրերում, որտեղ երեխան սովորում, խաղում և ապրում է այլ երեխաների և մեծահասակների հետ: Շարունակելով երեխաների իրավունքների մասին երեխաների կրթության տրամաբանությունը՝ Կոմիտեն հոդված 114-ով ողջունում է երեխաներին համապատասխան դպրոցական ծրագրերի ներդրումը, որոնցով ձգտում են ապահովելու ինտերակտիվ, հոգատար, պաշտպանիչ և մասնակցային միջավայրեր, որոնք երեխաներին և դեռահասներին նախապատրաստում են հասարակության մեջ ակտիվ դերակատարման և իրենց համայնքներում պատասխանատու քաղաքացի լինելու:

Ձեռնարկը անդրադառնում է երեխայի հետևյալ իրավունքներին.

1. Բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու,
2. Ընտանիքում ապրելու,
3. Կրթության,
4. Հանգստի և ժամանցի,
5. Առողջության և առողջապահական ծառայություններից օգտվելու,
6. Տնտեսական շահագործումից զերծ լինելու,
7. Վերականգնման և վերաինտեգրման,
8. Զինված հակամարտությունների ժամանակ երեխաների իրավունքներին,
9. Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքներին:

Առաջնորդվելով կարողունակությունների վրա հիմնված կրթության մոդելով՝ ձեռնարկի բովանդակությունը նպաստում է ձևավորելու ՀՊՉ-ով սահմանված (I) ինքնաճանաչողական և սոցիալական, (II) ժողովրդավարական և քաղաքացիական, (III) մշակութային կարողունակությունները:
Ուսուցչի աշխատանքն առավել հեշտացնելու համար յուրաքանչյուր թեմայի սկզբում սահմանվել են դրա ուսուցման նպատակը և ուսումնառության վերջնարդյունքները, ներկայացվել է թեմայի բովանդակությունը երեխաների իրավունքների վերաբերյալ: Դրանց հաջորդում են գործնական աշխատանքները, որոնք ավելի թիրախային դասերի ընթացքում կօգնեն Ձեզ սահմանելու ավելի փոքր վերջնարդյունքներ և հասնելու դրանց: Ձեռնարկում տեղ գտած յուրաքանչյուր գործանական աշխատանք ունի հետևյալ բաղադրիչները.

Գործնական աշխատանքի նպատակը, որը կապում է դասի (իրավունքի) ուսուցման ու դրա կենսական կարևորության մոտեցումները

Գործնական աշխատանքի նպատակը սահմանելը ավելի որոշակիացնում է թեմայի նպատակն արդեն գործնական աշխատանքի տիրույթում և օգնում է ուսուցչին ավելի հստակ պատկերացնելու այն արդյունքը, որը պետք է ստանա գործնական աշխատանքի ավարտին:

Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը

Գործնական աշխատանքի համար նախապես սահմանվում է անհրաժեշտ ժամաքանակ: Կարևոր է հաշվի առնել, որ այդ ժամաքանակը նվազագույնն է, ուստի տարբեր դասարանների կամ սովորողների կարիքներից ելնելով՝ ուսուցիչներին խորհուրդ է տրվում չսահմանափակվել և օգտագործել ավելի շատ ժամանակ, քան կարող է նշված լինել: Միաժամանակ, նշվածից քիչ ժամանակում գործնական աշխատանքները իրականացնել խորհուրդ չի տրվում:

Տարիքային շեմը, որի համար կիրառելի է գործնական աշխատանքը

Հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, դրանցով պայմանավորված գիտելիքը և հմտությունները, ինչպես նաև հոգեբանական առանձնահատկությունները՝ նախապես սահմանվում է տարիքային շեմ, որի համար կիրառելի է այդ գործնական աշխատանքը:

Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և միջավայրը

Ուսուցչի աշխատանքը հեշտացնելու համար նախապես սահմանվում է այն բոլոր նյութերի և միջավայրի նկարագիրը, որն օգնելու է կատարելու գործնական աշխատանքը:

Աշխատանքի ընթացքը

Այս ենթաբաժնում մանրամասն՝ քայլ առ քայլ, նկարագրվում է գործնական աշխատանքի ընթացքը, նկարագրվում են սովորողների և ուսուցչի հրահանգները, որոնք ուսուցիչը պետք է տա սովորողներին, այդ հրահանգների հերթականությունը, գործնական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ ուղղորդումները և այլն:

Ուսուցչի նշումները

Հաշվի առնելով սովորողների տարբեր կարիքները կամ նախասիրությունները՝ «Ուսուցչի նշումները» ենթաբաժնում որոշակի խորհուրդներ են առանձնացված ուսուցչի համար, որոնք կօգնեն վերջինիս գործնական աշխատանքի ընթացքը որոշակիորեն փոխելու և հարմարեցնելու կոնկրետ դասարանի կամ սովորողների կարիքներին:

Գործնական աշխատանքների նման կառուցվածքը հնարավորություն կտա Ձեզ նախապես մանրամասնորեն պլանավորելու դասը՝ նախապատրաստելով անհրաժեշտ նյութեր, անվտանգ միջավայր և այլն:

Յուրաքանչյուր թեմայի ավարտին հեղինակներն առաջարկում են առարկայական կապեր թե՛ թեմաների, թե՛ առարկաների բովանդակության մակարդակում:
Հաշվի առնելով ՀՊՉ-ի կողմից ընդգծվող միջառարկայական կապերի կարևորությունը՝ ձեռնարկը հնարավորություն է տալիս ապահովելու միջառարկայական կապերը, ինչպես նաև կազմակերպելու համատեղ դասեր այլ առարկաների հետ:

Տեղյակ եղեք մասնակից երեխաների հաշմանդամության և անհատական կարիքներին: Համոզվեք, որ դերախաղի գործողությունները համապատասխանում են ներառական, հարգալից և զգայուն լինելու իրենց կարողություններին: Համոզվեք, որ դերակատարման միջավայրը և նյութերը հասանելի են բոլոր երեխաներին՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են շարժունակությունը, տեսողությունը և լսողության առանձնահատկությունները: Անհրաժեշտության դեպքում հարմարեցրեք գործողությունները տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց: Գործնական աշխատանքներից առաջ կարող եք գործածել «Նախավարժանք» հավելվածում առաջարկվող տարբերակները, որոնք ևս ստեղծվել են ներառականության բաղադրիչը հաշվի առնելով:
Ձեռնարկի առաջնային թիրախային լսարանը արվեստի ուսուցիչներն են: Ձեռնարկը գործածելիս, թերևս, էական է հաշվի առնել, որ այն նախատեսված է ուսուցչի համար, հետևաբար թեմաների բովանդակությունը ևս նախատեսված է ոչ թե սովորողների, այլ ուսուցիչների համար:

Ձեռնարկը հրատարակվել է «Իմ կոնվենցիան» ծրագրի և շվեդական «ShareMusic & Performing Arts» կազմակերպության աջակցությամբ:

«Իմ կոնվենցիան» առաջին քայլն է Շվեդիայի և Հայաստանի գործընկերների միջև մշակույթի և քաղաքագիտության ոլորտներում երկարաժամկետ բազմամասնագիտական համագործակցության (2020–2023 թթ.):

Նպատակն է ուսումնասիրել և ստեղծել գեղարվեստական աշխատանքի մեթոդներ՝ որպես մարդու իրավունքների հետ աշխատելու գործիք:

«Իմ կոնվենցիան» ծրագրի շվեդ գործընկերներն են ShareMusic & Performing Arts-ը, Småland's Music och թատրոնը և Scenkonst Sörmland-ը, հայ գործընկերներն են Երևանի պետական համալսարանը և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի փոքր թատրոնը: «Իմ կոնվենցիան» իրականացվել է Շվեդիայի ինստիտուտի, Շվեդիայի փոստային ինդեքսների հիմնադրամի և Շվեդական արվեստի խորհրդի աջակցությամբ:

Ծրագրի շրջանակում երեխաների համար կազմակերպվել է «Իմ կոնվենցիան» բեմադրությունը՝ Շվեդիայի և Հայաստանի երեխաների և երիտասարդների հետ սեմինարների և հարցազրույցների միջոցով: Գրեթե լռելյայն, առանց գեղարվեստական արտահայտման այլ լեզվի, երեխաների իրավունքներն ուսումնասիրվել են նրանց սեփական պայմաններով: Նպատակն էր ամրապնդել երեխաների գիտելիքներն իրենց իրավունքների վերաբերյալ և առաջարկել հարթակ՝ ավելին իմանալու և իրենց ձայնը լսելի դարձնելու համար:
ShareMusic & Performing Arts-ը արվեստի զարգացման և ներառման

գիտելիքի շվեդական կենտրոն է: Այստեղ աշխատում են յուրաքանչյուրի փորձառության, գեղարվեստական և մշակութային գործունեությանը մասնակցելու և զբաղվելու իրավունքի համար: Աշխատանքը սերտորեն կապված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և Կայուն զարգացման նպատակների հետ: Տեսլականն այն է, որ բոլորը պետք է հնարավորություն ունենան գեղարվեստականորեն արտահայտվելու մի աշխարհում, որտեղ տարբերությունները արժեքավոր են: Դրան հասնելու համար կազմակերպությունն աշխատում է մի քանի ոլորտներում, ինչպիսիք են՝ նորարարությունը և հետազոտությունը, աշխատանքային մեթոդների մշակումը, առարկայական համագործակցությունը, մասնագիտացումն ու գիտելիքների տարածումը:

Հեղինակներ

Մարիամ Մուրադյանը երեխաների իրավունքների փորձագետ է, ունի 12 տարվա մասնագիտական փորձ և կրթություն մարդու իրավունքների, քաղաքագիտության, սոցիալական աշխատանքի և դասավանդման ոլորտներում: Մարիամ Մուրադյանը Global Campus Caucasus-ի երեխաների իրավունքների տարածաշրջանային պատասխանատուն է և Երևանի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս: Նրա հետազոտական հետաքրքրությունները ներառում են երեխաների պաշտպանությունը, անչափահասների արդարադատությունը, առողջության, կրթության, սոցիալական պաշտպանության և ընտանիքում ապրելու երեխաների իրավունքը: Տիկին Մուրադյանը ներգրավված է եղել որպես փորձագետ Հայաստանում, Արցախում և Կենտրոնական Ասիայի և Արևելյան գործընկերության այլ երկրներում երեխաների իրավունքների մշտադիտարկման խմբերում: էլ. հասցե՝ m.muradyan@ces.am:

Սերինե Ավետիսյանը կրթության մասնագետ է: Ակադեմիական կրթություն ստանալով միջազգային հարաբերությունների և մարդու իրավունքների ոլորտում՝ տիկին Ավետիսյանը զբաղվել է կրթական նախաձեռնությունների կառավարման հարցերով: Նրա կարևոր ձեռքբերումներից են Հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական ուսումնական ծրագրերի և վերջիններիս համապատասխան դասավանդման և ուսումնառության նյութերի մշակման գործընթացի համակարգումը: Բացի այդ, տիկին Ավետիսյանը ակտիվորեն ներգրավված է տարբեր կրթական ծրագրերում: Որպես կրթության փորձագետ՝ ներգրավված է Հայաստանում աշակերտական խորհուրդների հզորացման ծրագրում, մասնակցել է հասարակագիտության ուսուցիչների համար խաղաղաշինական կրթության ուսումնաօժանդակ ձեռնարկի մշակմանը: էլ. հասցե՝ serine.avetisyan22@gmail.com:

Տաթևիկ Աբրահամյանը մանկական և մանկավարժ-հոգեբան է: Նա 13 տարի աշխատում է որպես հոգեբան կրթական կառույցներում՝ կատարելով ախտորոշիչ, խորհրդատվական և լուսավորչական աշխատանքներ տարրական, միջին և ավագ դպրոցների երեխաների և դեռահասների, նրանց ծնողների և մանկավարժների հետ: Վերջին 8 տարում մշակել, համակարգել և իրականացրել է դասընթացներ հոգեբանության և կրթության ոլորտներում՝ որպես դասընթացավար և վերապատրաստող համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ: Գիտական հոդվածների և երեխաների հետ աշխատող աջակցող մասնագետների համար ձեռնարկների հեղինակ է: Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիայի համահիմնադիր է: Էլ. հասցե՝ tatevikabrahamyan@gmail.com:

Կարին Սթայվերսը երկար տարիներ աշխատում է ShareMusic & Performing Arts-ի հետ, որտեղ նա վարում է ավանդական դրամայի, տիկնիկային և ստվերային խաղերի սեմինարներ: Կարինը պրոֆեսիոնալ տիկնիկավար և դերասանուհի է, իսկ 2023 թվականի հունվարից՝ նաև իրավաբան: «Իմ կոնվենցիան» կատարողական արվեստի բեմադրության միջոցով Կարինը միավորեց այս երկու աշխարհները: Կարինի համար ոգեշնչման աղբյուր է մանկապատանեկան թատրոնը, ինչի հետ նա ամենաշատն է առնչվել իր դերասանական կարիերայում: Նա կատարողական արվեստն ընկալում է որպես երեխաներին իրենց իրավունքների մասին իրազեկելու զարմանալի գործիք:

Բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու իրավունք

Թեմայի ուսուցանման **նպատակն** է, որ սովորողները ճանաչեն բռնությունը և կարողանան իրենց պաշտպանել բռնությունից՝ ինքնուրույն կամ մեծահասակների օգնությամբ:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ աշակերտները

- Հստակորեն կարողանան բացատրել իրենց տարբեր հույզերը տարբեր իրավիճակներում և հնարավոր բռնության դեպքում:
- Շրջապատում տարբեր հույզեր/զգացմունքներ տեսնելիս (այդ թվում բռնության դեպքեր) անտարբեր չլինեն, ցուցաբերեն ապրումակցում և ձեռնարկեն համապատասխան քայլեր:

Թեմայի բովանդակությունը

Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումներն ու տեսակները տարածված են ամբողջ աշխարհում: Դրանք երեխայի զարգացմանը զուգընթաց՝ կյանքի տարբեր իրավիճակներում ու միջավայրերում երեխայի զարգացման մտավոր, հոգևոր, ֆիզիկական աճի վատթարագույն խոչընդոտներից են: Բռնության տեսակները սահմանելիս կարևոր ցուցիչներ են.

- երեխայի ֆիզիկական զարգացումը,
- մտավոր ունակությունները,
- երեխայի ներգրավվածության տեսակը որոշ գործողություններում,
- երեխայի կարծիքի դիտարկումը,
- և այլ գործոններ, որոնք անմիջապես կապված են երեխայի ունակությունների հետ:

Սակայն մեկ այլ մոտեցմամբ՝ բռնությունը կանխարգելելու երեխային բռնության հետևանքներից զերծ պահելու և/կամ վերականգնելու ու կրկնազոհականացումից խուսափելու համար անհրաժեշտ է դիտարկել երեխայի անմիջական (ընտանիք, խնամակալ, կրթական հաստատություն, համայնք) և միջավայրային (պետության սոցիալ-տնտեսական վիճակ, ավանդույթներ, պատերազմական իրադրություն, բնական աղետներ և այլն) շրջապատը: Այդ մոտեցման համաձայն՝ ոչ մի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառ չի կարող արդարացնել երեխայի նկատմամբ բռնությունը:

Բռնության ոչ մի դրսևորում արդարացված չէ, և երեխաների նկատմամբ բռնությունը կանխարգելելի է[1]: Այս տրամաբանությամբ են ստեղծվում երեխային բռնությունից պաշտպանելու մեխանիզմներն ու պարտավորություններն այդ գործում ազդեցություն ու ներդրում ունեցող բոլոր դերակատարների կողմից:

Երեխաների նկատմամբ բռնության կիրառումը կարող է հանգեցնել տարատեսակ բացասական հետևանքների՝ *մահ, ծանր վնասվածքներ, նյարդային համակարգի և զարգացման խեղում, առողջության ռիսկային իրավիճակներ, անցանկալի հղիություն, հիվանդություններ և վարակներ, երեխայի ապագան վտանգող մի շարք գործոններ և առավելապես մանկությունից զրկելու դեպքեր:* Հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ բռնությունը առանձնահատուկ է: Նրանք հաճախ են դառնում բռնության զոհեր՝ ելնելով իրենց առողջական, սոցիալական և միջավայրային առանձնահատկություններից: Դպրոցում պետք է բացառվի նրանց նկատմամբ բուլինգը (ծաղրը, անվանարկումն ու տարբերակված մոտեցումը), որում կարևոր է ուսուցիչների դերը:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 1.1.
Արտահայտենք մեր հույզերը

Վարժանքը կիրառելի է **6-12 տարեկանների** համար:

Նպատակ: Վարժանքը սովորողներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց հույզերը, ինչպես նաև ճանաչելու դասընկերների հույզերը և զգացմունքները տարբեր իրավիճակներում: Այն կօգնի տարբեր իրադրություններում հասկանալու դասընկերների հույզերը, վտանգները կամ հնարավոր բռնության նշանները:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- առնվազն մեկ հայելի,
- շրջանաձև կահավորված դասասենյակ,
- հարցերի շարք (ուսուցչի համար),
- թուղթ ու գրիչ ընթացքում նշումներ անելու համար,
- անկաշկանդ միջավայր*:

[1]ԵԻՀ, Ընդհանուր մեկնաբանություն No 13(2011), Երեխայի բռնության բոլոր ձևերից զերծ լինելու իրավունք, նախաբան, կետ 3:

*Անկաշկանդ միջավայր ստեղծելու համար կարող եք ինքներդ սկսել վարժանքը՝ հայելու դիմաց տարբեր զգացմունքներ արտահայտող դեմքեր ընդունելով: Այսպես սովորողները ավելի համարձակ կլինեն: Կամ ընտրեք դասարանից մեկ կամավորի, որը կցանկանա սկսել, և իր օրինակով մյուսներին հնարավորություն տվեք շարունակելու:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Խնդրեք երեխաներին նայել հայելու մեջ և արտահայտել տխրություն կամ ուրախություն (երեխաներին բաժանեք զույգերի, եթե հայելին մեկն է կամ հայելիների թիվը սակավ է):
- Խրախուսեք նրանց ընդունել վախի, զայրույթի և այլ հույզերի դեմքի արտահայտություններ:
- Հայելու առջև իրենց դեմքերին մի քանի արտահայտություններ փորձելուց հետո երեխաներին նստեցրեք շրջանի մեջ: Բացատրեք, որ այժմ պիտի պատրաստ լինեն այլ դեմքեր ընդունելու՝ տարակուսած, զարմացած, ամաչկոտ, անհանգստացած: Շատ կարևոր է հասկանալ, թե արդյո՞ք սովորողները կարող են անվանել պատկերված հույզը: Օրինակ, երբ նայում են իրենց ընկերոջը, արդյո՞ք հասկանում են, թե նա ինչ է զգում այդ պահին:
- Այնուհետև խմբի հետ քննարկեք, թե երբ են առաջանում այս զգացմունքները: Սա զարգացնելու համար հնչեցրեք արդեն նախապես պատրաստված հարցեր: Օրինակ՝ ընկերդ քեզ հրեց: Ի՞նչ կզգաս: Ուրա՞խ ես, թե՞ տխուր: Ի՞նչ է բռնությունը: Այս գործողությունը բռնությո՞ւն է, թե՞ ոչ:

Հարցերը կարող են լինել նաև հետևյալ բնույթի՝

- Ուրա՞խ ես, թե՞ տխուր, երբ պետք է շուտ քնել:
- Ամաչկո՞տ եք, հուզվա՞ծ, թե՞ նյարդային, երբ ունեք նոր դասակ:
- Ուրա՞խ ես, թե՞ տխուր, երբ հայրիկը ստիպում է ամեն օր ատամներդ լվանալ:
- Ամաչկո՞տ եք, ագրեսի՞վ, թե՞ ուրախ, երբ նոր դասընկեր է միացել ձեր դասարանին:
- Տխո՞ւր ես, ջղա՞յին, թե՞ ոչինչ չես զգում, երբ մայրիկը գոռում է քեզ վրա:
- Ուրա՞խ ես, նյարդա՞յին, թե՞ վախեցած. գուցե տխուր կամ անտարբեր, երբ քո երկու դասընկերները վիճում են, և մեկը հարվածում է մյուսին:

Ուսուցչի նշումները

Մինչև խաղ առաջարկելը լավ գնահատեք հնարավոր ռիսկերը: Փորձեք հնարավորինս մեղմել երեխաների սուր արձագանքները, ինքներդ մի տվեք սուբյեկտիվ գնահատականներ, այլ միշտ ճշտեք երեխայից: Կարևոր է դիտարկել ինչ սահմանափակումներ կարող է ունենալ այս կամ այն հաշմանդամությամբ երեխան: Մեկ կամ մի քանի վերջույթի բացակայության պարագայում փորձեք գտնել վերջույթները ներգրավող վարժանքների այլընտրանքներ: Խրախուսեք և հաստատեք նրանց գաղափարները: Օգտագործեք ժեստային նշաններ օրինակ՝ բութ մատները վեր (համաձայն եմ) /ներքև (համաձայն չեմ) /կողք (համաձայն եմ կիսով չափ): Այն խրախուսում է ներառականությունը, քանի որ բոլոր երեխաները կարող են անմիջապես արձագանքել: Քննարկումները կապեք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին և 19-րդ հոդվածներին և ընդգծեք, որ նրանք իրավունք ունեն

իրենց զգացմունքներն արտահայտելու և դրանք կիսելու մարդկանց հետ:

Գործնական աշխատանք 1.2.
Հույզերը/ զգացմունքները բնական են

Վարժանքը կիրառելի է **6-14 տարեկանների** համար:

Վարժանքի **նպատակն է** ուսումնասիրել երեխաների զգացմունքները և պարզել՝ ինչպես են դրանք փոխվում օրեցօր կամ պահից կախված:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- շրջանաձև կանգնելու համար ազատ դասասենյակ կամ մեկ այլ տարածք,
- ընթերցվող հարցերը (ուսուցչի համար), ինչպես նաև թուղթ ու գրիչ ընթացքում նշումներ անելու համար,
- անկաշկանդ միջավայր:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Աշակերտներին խնդրեք կանգնել շրջանաձև: Ընտրեք մեկ-երկու աշակերտի ու հարցրեք, թե ինչ են զգում այդ պահին: Երեխային/ներին խնդրեք դեմքի արտահայտությամբ կամ մարմնի որևէ մասի միջոցով արտահայտել այդ զգացմունքը:
- Շրջանում գտնվող երեխաներին խնդրեք ընդունել այն դեմքը, որն արտահայտում է իրենց զգացմունքները հենց այդ պահին:
- Այնուհետև խնդրեք երեխաներից որևէ մեկին կանգնել և ավարտել հետևյալ նախադասություններից մեկը.
  - Ես ուրախ եմ, երբ… (խաղում եմ, նկարում եմ, մայրիկիս հետ եմ)
  - Ես տխուր եմ, երբ… (մեկուսացած եմ զգում, գնում եմ քնելու, չեմ տեսնում հայրիկիս մինչև քնելը)
  - Ես զայրացած եմ, երբ…
  - Ես հպարտ եմ, երբ…
  - Ես համարձակ եմ, երբ…
  - Ես հիասթափված եմ, երբ….

Եթե երեխաները համաձայն են իրենց դասընկերոջ պնդման հետ (նախադասությանը, որը կազմել էր), փոխում են իրենց տեղերը: Վերջին փոխվող երեխան, որը չի հասցնում նստել, մնում է կենտրոնում և ավարտում է մեկ այլ նախադասություն: Եթե դա դժվար է, սովորողները չեն կարողանում այս կանոններով կատարել առաջադրանքը (դասարանում կա հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխա), Դուք կարող եք փոխել

կանոնները. երեխաները կարող են ծափ տալ, եթե համաձայն են, կամ ժպտալ: Ուսուցիչը կարող է առաջարկել նաև արձագանքի այլ մեթոդ՝ հաշվի առնելով դասարանում սովորողների ֆիզիկական և մտավոր կարողությունները:

Կարևոր է, որ օգնեք երեխաներին զգացական բառեր կիրառելու այն պահին, երբ նրանք ուժեղ զգացմունք են ունենում: Օրինակ՝ կարող եք ասել. «Դուք իսկապե՞ս ոգևորված եք այդ խաղով», կամ՝ «Դուք հիասթափվա՞ծ եք այս հանելուկից»:

Այլ գաղափարներ
Օգտագործելով տպագրիչ սարք (պրինտեր)՝ տպեք պատկերներ, որոնք ներկայացնում են զգացական բառեր և փակցրեք գրատախտակին շրջված, որպեսզի երեխաները մոտենան և ուղղեն թուղթը: Խնդրեք սովորողներին բացատրել այն զգացողությունը, որն արտահայտում է պատկերը և խոսեք այն իրավիճակների մասին, երբ նրանք ապրել են այդ զգացումը: Նույն կերպ կարելի է ցանկացած պատմություն կարդալիս կամ լսելիս տարբեր դասաժամերի (պատմություն, գրականություն) ընդհատել սովորողներին և հարցնել, թե ինչ են զգում այդ պահին:

Միջառարկայական կապեր

Կենսաբանություն/ Ես և շրջակա աշխարհը (տարրական դասարանների դեպքում) - Սովորողները բռնությունը ճանաչելու, ինչպես նաև բռնությունից խուսափելու համար պետք է պատկերացնեն, թե իրենց ֆիզիկական և հոգեկան զարգացումը ինչպես է տեղի ունենում: Այստեղ կարող են օգնության գալ կենսաբանության վերաբերյալ իրենց գիտելիքները: **Հասարակագիտություն** - Մարդու հիմնարար իրավունքներն ու երեխաների իրավունքները ուսումնասիրվում են նաև այս առարկայի շրջանակում:

ԹԵՄԱ 2

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունք

Նպատակ: Թեմայի ուսուցման նպատակն է սովորողներին ներկայացնել երեխաների իրավունքների կոնվենցիայի՝ երեխայի «ընտանեկան միջավայրում» ապրելու իրավունքը և դրա ապահովման մեխանիզմները:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ սովորողները

- Կբացատրեն, թե ինչպիսի ընտանիքներ կարող են լինել:
- Կկարողանան առանձնացնել այն կարևոր մարդկանց, որոնք սիրում և հոգ են տանում իրենց համար և հասկանալ, որ նրանք պատկանում են մի ընտանիքի, որը յուրահատուկ և առանձնահատուկ է:
- Կհամեմատեն տարբեր «ընտանեկան միջավայրերը», կբացատրեն այդ տարբերությունների պատճառները, միաժամանակ կընկալեն, որ այդ տարբերությունները նորմալ են:

Թեմայի բովանդակությունը

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի նախաբանում նշվում է, որ «երեխան իր անհատականության և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում»: Սակայն, կյանքի տարբեր իրավիճակներից ելնելով՝ երեխաներից շատերը զրկվում են ընտանեկան միջավայրից, և երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն իրացնելու համար նրա խնամքի և հոգածության մի շարք պարտավորություններ ստանձնում է պետությունը: Վերջինս կարող է դիմել «ընտանեկան միջավայրի» ապահովման տարբեր ձևերի: Երեխայի «ընտանեկան միջավայրի» ապահովման պարտավորությունները միևնույն ժամանակ պետք է ներառեն այդ միջավայրում երեխայի «երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտների» բաղադրիչները: Երեխայի՝ կենսաբանական ընտանիքում ապրելը պետք է լինի ամենակարևոր սկզբունքը այս իրավունքն ուսումնասիրելիս: Միայն ծայրահեղ և երեխայի լավագույն կարիքներից ելնելով այս սկզբունքը կարող է խախտվել: Հաշմանդամություն ունեցող որևէ երեխա չպետք է զրկվի ընտանիքում ապրելու իրավունքից այլ իրավունքների (կրթության, վերականգնման, առողջության և այլ) իրացման նպատակով:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 2.1.
Ես պատկանում եմ իմ ընտանիքին

Վարժանքը կիրառելի է **6-10 տ.** տարիքային խմբի համար:

Նպատակ: Վարժանքի նպատակն է դասարանում ցույց տալ, թե ինչ բազմազան ընտանիքներ կարող են լինել և ընդգծել սովորողների պատկանելությունը իրենց ընտանիքներին:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **կես դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- ընտանեկան լուսանկարներ՝ ներառյալ ընտանի կենդանիների կամ խաղալիքների, որոնք կարևոր են սովորողների համար,
- տպիչ՝ երեխաների նկարները տպելու համար,
- երկկողմանի կպչուն ժապավեն,
- ընթերցվող հարցերը (ուսուցչի համար), ինչպես նաև թուղթ ու գրիչ՝ ընթացքում նշումներ անելու համար,
- անկաշկանդ միջավայր:

Գործնական աշխատանքի ընթացքը

Շատ կարևոր է տեղեկացված լինել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան մշակույթից և ավանդույթներից, իսկ զգայունություն դրսևորելու համար պետք է նախ և առաջ ճանաչել սովորողին: Վարժանքը անցկացնելու համար նախապես խնդրեք սովորողներին բերել իրենց համար ամենակարևոր մարդկանց կամ իրերի՝ ներառյալ ընտանի կենդանիների կամ խաղալիքների լուսանկարները, որոնք կարևոր նշանակություն ունեն երեխաների համար: Եթե տպված լուսանկար չեն կարող բերել, խնդրեք ուղարկել թվային տարբերակը և փորձեք դպրոցում տպել դրանք: Հավաքված լուսանկարներով գրատախտակին կամ պատին կազմակերպեք «Ընտանիք» ցուցադրություն, որտեղ երկկողմանի կպչուն թղթով փակցված կլինեն լուսանկարները: Երբ ցուցադրությունը պատրաստ կլինի, խնդրեք աշակերտներին ներկայացնել իրենց ընտանիքները: Հնարավորության դեպքում ցանկալի է, որ վերցնեն այն նկարը, ում մասին խոսում են, ներկայացնելիս պահեն իրենց ձեռքում, որից հետո հետ փակցնեն: Այսպես հնարավորություն տվեք բոլորին խոսելու: Սովորողների ներկայացնելու ընթացքում փորձեք պատասխանել հետևյալ հարցերին և պահպանել հետևյալ սկզբունքները[2].

- Ո՞վ է լուսանկարում:

[2] Կարևոր է խոսքում կիրառել մայրիկ, հայրիկ, քույր, եղբայր, տատիկ (և այլն) բառերը:

- Ինչո՞ւ են նրանք առանձնահատուկ և ինչպիսի՞ն են նրանք իբրև ընտանիքի անդամ:
- Որտե՞ղ են նրանք ապրում:
- Ինչպե՞ս եք ժամանակ անցկացնում նրանց հետ:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում նրանց հետ:
- Ինչպե՞ս եք ցույց տալիս ձեր ընտանիքին, թե ինչ եք զգում (սա կօգնի նրանց հասկանալու, թե ինչ է նշանակում պատկանել մարդկանց խմբին):

Ուսուցչի նշումները

Երեխաներին հարկավոր է աջակցել հասկանալու, որ ընտանիքները տարբեր են, ունեն տարբեր կազմեր: Բայց շատ կարևոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուրն ունի ընտանիքին պատկանելու իրավունք: Խրախուսեք երեխաներին դիտարկել իրենց իրավունքները այս համատեքստում: Օրինակ, երբ նրանք մեծանան, պետք է ցանկանան ունենալ իրենց ընտանիքը: Սա նրանց իրավունքն է, որը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Կարևոր է աջակցել այն երեխաներին, որոնք դժվարանում են խոսել կամ պահել նկարը ձեռքում: Եթե երեխան ֆիզիկական խնդիրներ ունի, կարող եք դուք պահել և ցույց տալ բոլորին կամ խնդրել, որ աշակերտներից որևէ մեկն օգնի: Այն երեխաների համար, որոնք դժվարանում են խոսել, պարզ հարցեր պատրաստեք.

- Ո՞վքեր են նկարում:
- Ո՞ւմ հետ ես խաղում:
- Ի՞նչ ես սիրում խաղալ իրենց հետ:
- Ո՞ւմ հետ ես շատ ուրախ:

Գործնական աշխատանք 2.2.
Իմ ընտանիքն իմ կոլաժում

Վարժանքը կիրառելի է **6-10** տարեկանների համար:

Նպատակ: Վարժանքի նպատակն է սովորողների մեջ ընդգծել պատկանելությունը իրենց ընտանիքներին:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **երկու դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- Ընտանեկան լուսանկարներ՝ ներառյալ ընտանի կենդանիների կամ խաղալիքների, որոնք սովորողները դասարանում կկարողանան կտրտել,
- թերթեր, ամսագրեր, որոնք կկարողանան կտրտել և հատվածներ առանձնացնել,
- սոսինձներ, մկրատներ, A3 ֆորմատի թղթեր,

- տպիչ՝ երեխաների ուղարկած նկարները տպելու համար,
- ըստ երեխաների կարիքների՝ նախապես պատրաստված մեկ կոլաժի օրինակ,
- անկաշկանդ միջավայր:

Գործնական աշխատանքի ընթացքը

Սովորողներին խնդրեք բերել իրենց ընտանիքի անդամների տարբեր լուսանկարներ, սոսինձ, մկրատ, ամսագրեր կամ թերթեր՝ կտրտելու և փակցնելու համար: Դուք ևս կարող եք տարատեսակ նյութեր նախապատրաստել:
Դասարանում սովորողներին հանձնարարեք ստեղծել իրենց ընտանիքների կոլաժը՝ փակցնելով ընտանիքի անդամների լուսանկարները, նաև համալրել թերթերից ու ամսագրերից տարբեր արտահայտություններով կամ պատկերներով, որոնք բնորոշ են իրենց ընտանիքներին: Այս գործնական աշխատանքի ժամանակ կարևոր է հաշվի առնել մի քանի սկզբունք.
- Հնարավորինս շատ խրախուսեք ստեղծագործականությունը:
- Մեկ դասաժամ հատկացրեք կոլաժները պատրաստելուն, եթե սովորողները չգիտեն, թե ինչ է կոլաժը, նախապես առանձնացրեք մի քանի օրինակ, ցուցադրեք դասարանում, որպեսզի ավելի հեշտ կարողանան աշխատել:
- Խրախուսեք սովորողներին կոլաժներում արտահայտել իրենց և ընտանիքի անդամների տեղն ու դերը միմյանց համար:

Երկրորդ դասաժամին արդեն փակցրեք կոլաժները, սովորողներին հնարավորություն ընձեռեք շրջելու ու նայելու բոլոր աշխատանքները: Ընթացքն ավելի արդյունավետ կկազմակերպվի, եթե դասարանը բաժանեք երկու խմբի՝ առաջին խմբի ներկայացուցիչները կկանգնեն իրենց կոլաժների մոտ, երկրորդ խումբը կշրջի և հարցեր կուղղի հեղինակներին, որից հետո խմբերը կփոխեն դերերը:
Եթե դասարանում կան խոսքի խնդիրներ ունեցողներ, ապա կարող եք այս հատվածը շրջանցել կամ հանձնարարել կարճ նկարագրություն (գրավոր): Խոսքի խնդիրներ ունեցող երեխաների պարագայում իրենց մոտեցող դասընկերները կարող են պատմել և նկարագրել իրենց զգացողությունները, իսկ նրանք ժեստով կարող են հաստատել կամ հերքել: Սա կհիշեցնի «գուշակելու խաղ»:
Շրջելու և կոլաժների վերաբերյալ քննարկումն առավելապես երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ենթատեքստում ծավալելու համար կոլաժը քննարկելիս առաջարկեք հնչեցնել հետևյալ հարցերը.
- Ի՞նչ դերերում կամ ի՞նչ դրվագներում են ընտանիքի անդամները:
- Ինչպիսի՞ արտահայտություններ կամ տեքստեր կան կիրառված կոլաժում, ի՞նչ են դրանք նշանակում:
- Ի՞նչ այլ պատկերներ կան օգտագործված, ինչո՞ւ են հատկապես դրանք օգտագործվել:

- Կոլաժները ավելի շատ գունավո՞ր են, թե՞ սև ու սպիտակ. ինչո՞ւ է այդպես:
- Ի՞նչ դեպք է տեղի ունեցել այդ պահին ընտանիքում, և ինչո՞ւ է հենց այդ դեպքը հիշվել:

Մտավոր զարգացման խնդիրներով երեխաների դեպքում առաջարկեք հնչեցնել հետևյալ հարցերը.

- Ովքե՞ր են նկարում: Ով ի՞նչ է անում:
- Որո՞նք են քո ամենասիրելի բառերը և որո՞նք դու ընդհանրապես չես սիրում:
- Ո՞ր նկարը չես սիրում և ինչո՞ւ:

Ուսուցչի նշումները

Երեխաներին պետք է աջակցել հասկանալու, որ ընտանիքները տարբեր են, բայց յուրաքանչյուրն ունի ընտանիքում ապրելու իրավունք: Խրախուսեք երեխաներին դիտարկել իրենց իրավունքները այս համատեքստում: Օրինակ՝ ընտանիքում բոլոր անդամներն ունեն իրենց իրավունքների շրջանակը և այդ իրավունքների հատման կետում պետք է փոխադարձ հարգանք ցուցաբերել միմյանց ցանկությունների, կարծիքի և որոշումների նկատմամբ: Շատ կարևոր է այս համատեքստում խոսել նաև փոխադարձ հոգատարության մասին: Կարող եք քննարկել երեխաների հետ ներընտանեկան դերերը, հարաբերությունները, և որ ընտանիքում բոլորն ունեն իրենց պարտականությունները:

Հասարակագիտություն - Մարդու հիմնարար իրավունքներն ու երեխաների իրավունքները ուսումնասիրվում են նաև այս առարկայի շրջանակում:

Գրականություն - Այս առարկայի շրջանակում որոշ ստեղծագործություններ այս կամ այն կերպ անդրադառնում են երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքին: Հետաքրքրիր կլինի թեման քննարկել «Գիքորը» պատմվածքի շրջանակում: Ընտանիքների տարբեր անդամների դերերի ու կարևորության առումով հետաքրքիր կլինի դիտարկել «Ավելորդը» պատմվածքը:

ԹԵՄԱ 3

Երեխայի կրթության իրավունք

Թեմայի **նպատակն** է, որ աշակերտները կարողանան պատկերացում կազմել կրթության հիմնարար իրավունքի մասին, առանձնացնել իրենց կարիքները կրթական գործունեության ընթացքում:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ սովորողները

- Ներկայացնեն կրթության դերն իրենց կյանքում, տարբերակեն կրթական գործընթացի դրական և բացասական կողմերն իրենց համար[3]:
- Ներկայացնեն կրթությունից իրենց ակնկալիքները և առանձնացնեն իրենց անելիքներն այդ ընթացքում:

Թեմայի բովանդակությունը

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան առանձնացնում է երեխայի կրթության իրավունքի երկու հոդված: Դրանցից առաջինով (հոդված 28-ով) պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և դրա իրացման հնարավորությունները՝ սահմանելով կրթության տարբեր ձևեր և սկզբունքներ (հավասար հնարավորություններ, մատչելիություն, հասանելիություն, հաճախելիության կանոնավորություն): Երկրորդ հոդվածը (հոդված 29-ը) ուղղված է երեխայի կրթության նպատակներին՝ «[…] երեխայի անհատականության, տաղանդի, մտավոր ու ֆիզիկական զարգացման՝ դրանց ամբողջական ծավալով», մշակութային ինքնատիպությանը և երեխային կյանքի տարբեր ոլորտներին պատրաստ լինելուն ուղղված կրթության բաղադրիչներին: ԵԻԿ-ի հոդվածները փոխլրացնող են և բխում են մեկը մյուսից, և ուսումնական այս ծրագիրը նախատեսում է դասաժամերի ընթացքում երեխայի կրթության իրավունքի ամբողջական ուսուցում: Ոչ մի երեխա, որևէ պայմանից ելնելով, չպետք է դուրս մնա կրթությունից: Դժվարին պայմանների պարագայում պետությունն ու մարդիկ պետք է ջանան նրան վերադարձնել կրթության համակարգ՝ առկա, հեռակա, հեռավար կամ ցանկացած այլ միջոցով գրել, կարդալ և հաշվել սովորեցնելու համար: Կրթությունը պարտադիր իրացման իրավունք է մինչև 14 տարեկան երեխաների համար:

[3] ՀՊՉՏ22, ՀՊՉՀ27, հասանելի է հետևյալ հղմամբ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 3.1.
Իմ երազանքի կրթությունը/ դպրոցը

Առաջադրանքը նախատեսված է **8-16 տարեկան** երեխաների համար:

Նպատակն է սովորողներին հնարավորություն տալ կենտրոնանալու իրենց իսկ կրթական կարիքների վրա, վերլուծելու կրթության յուրահատկությունները, քննարկելու և առանձնացնելու այն ամենը, ինչը կարևոր է դարձնում կրթությունը իրենց համար:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- վատման թղթեր՝ ենթախմբերի քանակով,
- գունավոր մատիտներ, յուղամատիտներ կամ գուաշ,
- խմբային աշխատանքի համար ազատ տարածք,
- գրիչ,
- բաց և անկեղծ միջավայր*:

*Բաց և անկեղծ միջավայր ապահովելու համար կարող եք նախապես քննարկել աշակերտների հետ իրենց ցանկություններն ու հույզերը: Հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում ընտրեք այն տարբերակը, որն իրենց համար դյուրին կդարձնի արտահայտել սեփական ցանկությունները (նկարել, ցույց տալ, երգել, խոսել) կամ, եթե արդեն աշակերտին լավ ճանաչում եք, ապա դուք ևս կարող եք առաջարկել տարբերակներ:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Իրականացրեք քննարկում «Ինչո՞ւ է սովորելը կարևոր» հարցի շուրջ, որպեսզի հարցը հասանելի լինի բոլորին, կարող եք այն վերաձևակերպել հետևյալ կերպ. «Ինչո՞ւ եք դուք գալիս դպրոց, ի՞նչն է ձեզ դուր գալիս դպրոցում, ինչի՞ց եք ձեզ լավ զգում, ի՞նչը ձեզ դուր չի գալիս, ի՞նչի համար է նախատեսված կրթությունը, ի՞նչն է ձեզ օգնում սովորելու ընթացքում, ի՞նչն է խանգարում»: Բոլոր պատասխանները գրեք գրատախտակին: Քննարկումն ուղղորդեք այնպես, որ աշակերտները խոսեն թե՛ կրթության բովանդակությունից, թե՛ կազմակերպումից, թե՛ իրենց ներգրավվածությունից:
- Ամփոփեք շեշտադրելով այն, որ բոլոր պատճառները սովորելու համար շատ էական են, և բոլոր մարդկանց սովորելու ցանկությունը պետք է բավարարված լինի, քանի որ կրթություն ստանալը յուրաքանչյուր մարդու կարևոր իրավունքներից է:
- Ներկայացրեք հաջորդ առաջադրանքը շատ մանրամասն: Հրահանգ. «Այս պահին մենք աշխատելու ենք խմբերով: Բոլոր խմբերի առաջադրանքը

լինելու է նույնը: Այն է՝ պատկերել երազանքի դպրոցը: Խմբով մտածեք այն մասին, թե ինչպիսին կուզենայիք տեսնել ձեր դպրոցը, ինչ հատուկ փոփոխություններ կցանկանայիք իրականացնել դպրոցում, օրինակ՝ փոխել դպրոցի շենքը, դասասենյակը, դասերի քանակը, դասերը, կամ կցանկանայի՞ք ուրիշ առարկաներ ուսանել, ի՞նչը կօգներ ձեզ դպրոցում ավելի լավ սովորելու»: Յուրաքանչյուր խմբում աշակերտները նկարում են նույն թղթի վրա միաժամանակ՝ նախապես քննարկելով, թե ինչն է իրենց համար կարևոր, որ արտահայտվի նկարում՝ բաժանելով աշխատանքը:

- Եթե վստահ եք, որ աշակերտները հասկացել են հրահանգը, դասարանը բաժանեք 4-5 հոգանոց խմբերի: Այն խմբերում, որտեղ ներառված են հաշմանդամություն ունեցող երեխաներ, անհրաժեշտության դեպքում կարող եք հրավիրել որևէ մեծահասակի:
- Երբ նկարները պարաստ են, բոլոր խմբերը պետք է ներկայացնեն իրենց կատարած աշխատանքները: Ներկայացնելու ընթացքում երեխաները պատմելուց հետո փորձում են վերարտադրել իրենց նկարած դպրոցում առկա ձայները՝ դպրոցի զանգի, երեխաների, եթե նկարել են մեքենաներ, ապա դրանց ձայները: Եթե երեխաները դժվարանում են՝ ուղղորդեք նրանց՝ ցույց տալով, օրինակ, գրքեր և հարցնելով. «Ի՞նչ ձայն է գալիս գրքերը թերթելիս»:
- Ամփոփեք վարժանքը՝ մատնանշելով այն բոլոր կարևոր ցանկություններն ու կարիքները, որոնք երեխաներն առանձնացրել և ներկայացրել են:

Ուսուցչի նշումները

Կարևոր է, որ գործնական առաջադրանքներ կատարելիս մասնակցեն դասարանի բոլոր երեխաները: Երբեմն առաջադրանքների ընթացքում կնկատեք, որ նրանց աշխատանքի տեմպը տարբեր է: Այդ պահերին միացեք տարբեր խմբերի՝ ցույց տալու սովորողներին ներգրավելու ձևը: Օրինակ՝ ընկերներից մեկը նկարել է ծառը, մյուսը պետք է գունավորի. ապա դուրս եկեք խմբից:

Գործնական աշխատանք 3.2.
Կրթական անհատական զարգացման պլան

Առաջադրանքը նախատեսված է **10-16 տարեկան** երեխաների համար:

Նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ առանձնացնելու սեփական պատկերացումները կրթական գործընթացի կարևորության մասին և կազմելու իրենց անհատական զարգացման պլանը կրթական գործունեության ընթացքում:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **երկու դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- թուղթ, գրիչ,
- նախապես տպված աշխատանքային թերթիկներ,
- գունավոր մատիտներ, մարկերներ:

Գործնական աշխատանքի ընթացքը

Բաժանեք «Ինչո՞ւ ես պետք է գնամ դպրոց» աշխատանքային թերթիկն աշակերտներին և խնդրեք լրացնել այն:

Ես պետք է գնամ դպրոց, որովհետև	
Իմ ծնողներն ուզում են, որ ես դպրոցում լինեմ	
Ես ուզում եմ լինել իմ ընկերների հետ	
Ես ուզում եմ սովորել շատ բաների մասին	
Ես ուզում եմ պատրաստվել լուրջ աշխատանքի իմ հետագա կյանքում	
Ես կրթության կարիք ունեմ, որ կարողանամ օգնել իմ ընտանիքին	
Ես ուզում եմ դառնալ ծրագրավորող, բժիկ, ուսուցիչ	

- Ամբողջացրեք բոլոր պատասխանները, խմբավորեք ամենահաճախակի նշված պատասխանները:
- Առաջարկեք երեխաներին ընթերցել Արամի մասին պատմությունը.

  «Արամը ցանկանում էր գնալ դպրոց և սովորել իր երկրի ու աշխարհի մասին որքան հնարավոր է նոր բաներ, բայց նա ապրում էր հեռավոր մի գյուղում: Ամենամոտ դպրոցը գտնվում էր 6 կմ հեռավորության վրա: Նա ստիպված էր ամեն առավոտ այդքան քայլել, որ կարողանա հասնել դպրոց: Ծնողները խղճում էին նրան և փորձում համոզել, որ ամեն օր չգնա դպրոց և սպասի մինչև իրենց բնակավայրին ավելի մոտ նոր դպրոց կառուցվի: Բայց Արամն ասում էր, որ դեմ չէ շատ աշխատելուն ու դպրոց գնալուն: Արամը ջանաց և կարողացավ ավարտել ոչ միայն տարրական ու հիմնական դպրոցները, այլև համալսարանը: Համալսարանում նա ստացել է ագրոտնտեսական կրթություն: Վերադառնալով գյուղ՝ սկսել է կիրառել իր գիտելիքները: Նա շատ հաջողակ է: Իր հմտություններով օգնել է ամբողջ գյուղին: Այժմ գյուղի բոլոր բնակիչները կառավարությունից պահանջում են, որ նոր դպրոց կառուցվի՝ հնարավորինս մոտ տարածքում: Իրենց ստորագրահավաքի

արդյունքում պետությունը համաձայնեց սկսել դպրոցի շինարարությունը: Այժմ Արամի գյուղի երեխաները գնում են դպրոց առանց որևէ դժվարության: Իսկ Արամը շատ ուրախ է, որ ժամանակին կարողացել է սովորել և հիմա վայելում է իր կրթության արդյունքները: Նա հավատում էր իր իրավունքին»:

- Իրականացրեք փոքրիկ բեմադրություն, որպեսզի պատմությունն ամբողջությամբ հասանելի ու տեսանելի լինի այն երեխաներին, որոնք ունեն որևէ կրթական խնդիր:

- Այնուհետև իրականացրեք քննարկում թիրախավորված հարցադրումներով:
  - Ի՞նչ էր մտածում Արամը դպրոց գնալու, սովորելու մասին:
  - Ի՞նչ առավելություն ունեցավ Արամը տարիներ անց:
  - Կուզեի՞ք Արամի նման լինել: Ինչո՞ւ:
  - Եթե Արամը չկարողանար շարունակել կրթությունը, ի՞նչ կլիներ:
- Ամփոփեք քննարկումն այն շեշտադրմամբ, որ Արամը գիտակցում էր կրթության կարևորությունը, որն արժեք էր Արամի համար: Դա իրեն հնարավարություն տվեց պահպանելու կրթություն ստանալու իր իրավունքը:
- Բացատրեք, որ հաջորդիվ աշակերտներն իրականացնելու են խմբային աշխատանք: Հրահանգ. «Դուք դպրոց գնալու հնարավորություն ունե՛ք, ձեր կրթություն ստանալու իրավունքը պաշտպանված է: Ի՞նչ կարող եք անել հիմա ձեր հաջողության համար»:
- Առաջարկեք լրացնել աղյուսակը և կազմել զարգացման պլան:

Որպեսզի արդյունավետ օգտագործեմ ժամանակս, ես պետք է

Դադարեցնեմ	Սկսեմ	Շարունակեմ
Օրինակ՝ համակարգչային խաղերի վրա շատ ժամանակ ծախսելը	Օրինակ՝ ավելի շատ ժամանակ տրամադրել մաթեմատիկային, քանի որ այն բարդ է ինձ համար	Օրինակ՝ ամեն օր կարդալ 15 րոպե

Ուսուցչի նշումները

Թեման քննարկվում է երկու օրվա կամ դասաժամերի ընթացքում, ուստի շատ կարևոր է կարողանալ պահպանել երկու օրերի միջև կապը: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար այս դեպքում կարելի է կիրառել նշաններով համակարգ վերջին աշխատանքային թերթիկը լրացնելու համար, նրանք կարող են նկարել կամ բանավոր պատմել խմբային աշխատանքի ներկայացման ժամանակ: Հնարավոր է կարիք լինի իրենց բացատրել առաջադրանքներն առանձին:

Միջառարկայական կապեր

Երաժշտություն - Աշակերտները փորձելու են նաև ձայնի ուղեկցությամբ/կատարմամբ արտահայտել իրենց ցանկությունները կամ պատկերները: Այստեղ կարող է օգտակար լինել «երաժշտություն» առարկայի ընթացքում ձեռք բերված որոշակի հնչյունների կիրառությունը:

Հասարակագիտություն - Մարդու հիմնարար իրավունքներն ու երեխաների իրավունքները ուսումնասիրվում են նաև այս առարկայի շրջանակում:

Կապը Աշակերտական խորհրդի գործունեության հետ: Քանի որ դպրոցներում ԱԽ հիմնական գործառույթներից մեկը սովորողների կրթության իրավունքի իրացմանը նպաստելն է, կարելի է կրթության իրավունքի քննարկման շրջանակներում նաև ԱԽ-ի հետ կազմակերպել արդյունավետ նախագծեր:

ԹԵՄԱ 4

Հանգստի և ժամանցի իրավունք

Նպատակը: Թեմայի նպատակն է, որ սովորողները պատկերացում կազմեն հանգստի և ժամանցի արդյունավետ կազմակերպման իրենց իրավունքի մասին՝ գործնականում ծանոթանալով դրա իրականացման ձևերին:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ

- Սովորողները հստակորեն պատկերացնում են հանգստանալու և ժամանցի կարևորությունը, այն, թե ինչպես իրենք կարող են կազմակերպել իրենց առօրյան[4]:
- Սովորողները հստակ պատկերացնում են իրենց հանգստի համար անհրաժեշտ պայմանները:

Թեմայի բովանդակությունը

Հանգստի և ժամանցի իրավունքն ու դրա իրացումը երեխայի մանկության որակի, անհրաժեշտ զարգացման, ինքնուրույնության և այլ իրավունքների իրացման հիմքերն են: Այն հաճախ դիտարկվում է որպես «մոռացված իրավունք», քանի որ հաճախ երեխաներն առհասարակ, անկախ հանգամանքներից, քիչ ժամանակ են հատկացնում խաղերին: Խաղը, սակայն, որպես սոցիալական և անձնական զարգացման հիմք, կարևոր է յուրաքանչյուր երեխայի համար: Մասնակցությունը ժամանցի տարբեր ձևերին, ստեղծագործական և մշակութային գործողություններին, թույլ է տալիս ապահովել երեխայի ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական, մտավոր, հոգևոր և բարոյական զարգացում: Խաղը և ժամանցի այլ ձևերին երեխայի մասնակցությունը կարևոր են նրա առողջության և բարեկեցության համար: Այդ ամենի շնորհիվ զարգանում են ստեղծարարությունը, պատկերացումը, ինքնավստահությունը և ինքնաբավարարությունը: Այս իրավունքի իրացումը սերտորեն կապված է երեխայի այլ իրավունքների լայն շրջանակի հետ՝ մտքի ազատ արտահայտման, խղճի և կրոնի ազատության, հավաքների ազատության, անձնական կյանքի գաղտնիության, տեղեկատվություն ստանալու և մեդիայի դերի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին, կրթության նպատակներին, երեխայի տնտեսական և այլ տեսակի շահագործումից ազատ լինելու իրավունքին:

Ավելին, խաղը վաղ մանկության շրջանի ամենաբնորոշ հատկանիշներից է, երբ երեխաները և՛ վայելում են իրենց ժամանցը, և՛ մարտահրավեր նետում

[4] ՀՊՉՏ27, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

իրենց կարողություններին՝ զարգացնելով սեփական ունակություններն այլ երեխաների հետ շփվելիս և խաղալիս երեխայակենտրոն, անվտանգ, աջակցող, խթանող և ոչ լարված միջավայրում: Սա նշանակում է, որ երեխայի այս իրավունքի իրացումը կապված չէ և չպետք է լինի մեծահասակների հետ: Այս իրավունքի շրջանակներում մեծահասակները պետք է ապահովեն երեխաների անվտանգ միջավայրը և թույլ տան նրանց ինքնուրույն տնօրինելու իրենց ժամանակը, դրա անցկացման ձևը, բովանդակությունն ու համագործակցությունը այլ երեխաների հետ:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 4.1.
Մի քիչ հանգստանանք

Վարժանքը նախատեսված է **6-16 տարեկան** երեխաների համար:

Նպատակն է ցույց տալ հանգստանալու կարևորությունը և հնարավորություն տալ երեխաների զգալու, փորձարկելու այդ վիճակը:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- նվագարկիչ/համակարգիչ,
- նախապես ընտրված երաժշտական մի քանի ստեղծագործություն,
- թուղթ,
- գունավոր մատիտներ,
- հանգիստ միջավայր, հնարավորություն տալ երեխաներին կենտրոնանալու երաժշտության վրա, եթե կարիք կա՝ դասարանի դռան վրա փակցնել ցուցանակ՝ «Չբացել», որպեսզի չընդհատեն:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Խնդրեք երեխաներին նստել շրջանով:
- Երեխաներին հարցրեք, թե ինչպես են իրենց զգում, երբ արթնանում են, օրվա ընթացքում, երբ շատ զբաղված են լինում: Այս դեպքում կարող եք նաև օրինակներ բերել կամ հիշեցնել առաջին հանդիպումը, երբ խոսքը հույզերի մասին էր (ուրախ եմ, տխուր, հոգնած, լարված, անհանգիստ, ոգևորված և այլն): Հնարավոր է կիրառել նաև հույզերի առաջին օրվա վիզուալ պատկերները:
- Երբ բոլոր երեխաները արտահայտեն իրենց զգացողությունները, ասեք, որ «այժմ կմիանա երաժշտություն, և դուք պետք է պարեք»: Բոլորը շարժվում են այնպես, ինչպես ցանկանում և կարողանում են: Թույլ տվեք՝ երեխաներն ընտրեն իրենց շարժումները՝ իրենց

կարիքին համապատասխան, ում ինչպես առավել հարմար է:
- Շարժվելու տեմպը և ռիթմը ևս ընտրում են երեխաները. կարող են քայլել, վազել, նստել, կանգնել, ընդունել այն դիրքը, որը կցանկանան:
- Սկսեք դանդաղ և հանգիստ երաժշտությունից: Մի քանի րոպե անց փոխեք ավելի ռիթմիկ երաժշտության: Ընթացքում պարբերաբար փոխեք երաժշտությունը: Ավարտե՛ք առույգ, ուրախ երաժշտությամբ, որը հնարավորություն կտա երեխաներին իրականացնելու հնարավորինս շատ շարժումներ:
- Խնդրեք, որ երեխաները հանգիստ տեղավորվեն, ում ինչպես հարմար է, և փակեն աչքերը:
- Միացրեք բնության ձայներով երաժշտություն: Խնդրեք, որ երեխաները պատկերացնեն, որ գտնվում են իրենց ամենասիրելի վայրում: Այնտեղ ամեն ինչ իրենց ամենասիրելի ձևով է դասավորված: Եթե կարողանան զգալ հոտը, ապա փորձեն զգալ ինչ բույրեր կան այնտեղ, ինչ ձայներ և գույներ: Երբ երեխաները պատրաստ կլինեն, խնդրեք, որ վերադառնան և կանգնեն/նստեն շրջանով: (Այս հատվածին տրամադրել ոչ ավել, քան 2-3 րոպե): Կարող են լինել երեխաներ, որոնք վարժության այս մասը կցանկական կատարել բաց աչքերով:
- Երբ բոլորը կկարողանան կենտրոնացնել իրենց ուշադրությունը, սկսեք քննարկում հետևյալ հարցերով.

  - Ինչպե՞ս էիք ձեզ զգում դանդաղ/արագ շարժվելիս: Խնդրեք երեխաներին, որ ցույց տան:
  - Ի՞նչը ձեզ ամենաշատը դուր եկավ: Ցու՛յց տվեք ամենահավանած շարժումը:
  - Ինչպե՞ս էիք զգում ձեզ ձեր սիրելի վայրը պատկերացնելիս: Կիրառեք առաջին օրվա հուզականության քարտերը այն երեխաների համար, որոնք դժվարանում են բառերով նկարագրել:
  - Ի՞նչ եք կարծում՝ դուք ունեք հնարավորություն հաճախակի ապրելու այսպիսի պահեր :
  - Կարևո՞ր է արդյոք, որ նման պահեր ձեր կյանքում շատ լինեն: Կիրառեք *այո, ոչ* քարտեր խոսքի խնդիրներ ունեցող երեխաների համար: (Սա վերաբերում է այն երեխաներին, որոնք ունեն խոսքի զարգացման խնդիր կամ քիչ զարգացած խոսք):
- Խնդրեք երեխաներին նկարել իրենց սիրելի վայրը և պատրաստեք մեծ պաստառ հաճելի վայրերի բոլոր պատկերներով: Ասեք երեխաներին, որ իրենք կարող են նայել նկարներին այն ժամանակ, երբ շատ հոգնած կլինեն:

Ուսուցչի նշումները

Պարը կարող է լինել՝ միայն ձեռքերով, միայն ոտքերով, ամբողջ մարմնով: Հնարավոր է կարիք լինի վիզուալիզացիայի, փակ աչքերով պատկեր կերտելու վրա մի փոքր ավելի ժամանակ ծախսել (երեխաները կարող են պառկել, նստել, կիսանստել և այլն): Երեխաները սկզբում դժվարությամբ են կենտրոնանում իրենց հուզականության և իրենց հաճելի պատկերի վրա: Կարող եք սկզբում մի քիչ խոսել այդ վայրի մասին, իրենց հետ քննարկել, հետո միայն խնդրել,

որ փակեն աչքերը:

Գործնական աշխատանք 4.2.
Մի քիչ հանգստանանք

Վարժանքը նախատեսված է **6-12 տարեկան** երեխաների համար

Նպատակը: Սովորողները կբացահայտեն, թե ինչու է հանգիստը կարևոր իրենց առողջության ու զարգացման համար, կկարողանան ընտրել հանգստի համապատասխան տարբերակներ, կսահմանեն, թե ինչպես պահպանել ուսման և հանգստի միջև հավասարակշռությունը:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.

- Երեք նկար
- Նկար 1: Երեխա, որը սևեռված դիտում է հեռուստացույց (փորձեք գտնել իսկապես հեռուստացույցին գամված երեխա):
- Նկար 2: Երեխաները խաղում են այգում/բակում:
- Նկար 3: Հոգնած, քնկոտ երեխան փորձում է գրել, իսկ ծնողները բարկանում են իր վրա:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Հարցրեք աշակերտներին, թե ինչ են իրենք սովորաբար անում դադարների, դասամիջոցների ընթացքում: Գրեք բոլոր պատասխանները գրատախտակին:
- Ցույց տվեք նկար 1-ը և նկար 2-ը և հարցրեք. «Ովքե՞ր են նկարում», «Ի՞նչ են անում», «Ի՞նչ են նկարները մեզ պատմում»: Ակնկալվող պատասխաններն են. «Երեխաները խաղում են, հանգստանում են, ինչ-որ բանով զբաղված են, ուրախանում են»:
- Ապա հարցրեք. «Ինչո՞ւ երեխաները կարիք ունեն հանգստանալու և խաղալու»:
- Գրեք աշակերտների պատասխանները գրատախտակին: Ըստ տրված պատասխանների՝ փորձեք ամփոփել, որ երեխաները կարիք ունեն հանգստանալու: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի խաղալու, մասնակցելու մշակութային միջոցառումների և հանգստանալու:
- Ցույց տվեք երեխաներին երեք նկարները և հարցրեք, թե ինչ են անում պատկերված երեխաները: Պատասխանները գրի առեք: Ապա դասարանը բաժանեք երեք խմբի՝ ըստ իրենց նախասիրությունների, և յուրաքանչյուր խմբին տվեք նկարներից մեկը:
- Յուրաքանչյուր խմբին ներկայացրեք իրենց առաջադրանքը:
- Խումբ 1-ին հանձնարարվում է առաջին նկարը և առաջադրվում է նկարելով պատկերել խաղացող երեխաներին: Հրահանգ՝ «Պատկերե՛ք

հանգստանալու համար հնարավոր բոլոր տարբերակները»:

- Խումբ 2-ին հանձնարարվում է երկրորդ նկարը, որտեղ երեխաները խաղում են բակում: Հրահանգ՝ «Բեմադրե՛ք նկարը՝ ավելացնելով գործողությունների բոլոր այն ձևերը, որոնք կարող են անել երեխաները»:
- Խումբ 3-ն իրականացնում է քննարկում: «Խմբով միասին եզրակացրեք, թե ինչ է հնարավոր անել այս պարագայում: Արդյո՞ք երեխան կարող է հանգստանալ և ինչո՞ւ»: «Եթե երեխան հոգնած է՝ ծնողները պե՞տք է թույլ տան իրեն հանգստանալ, ինչո՞ւ», «Երբ դուք հոգնած եք ու քնկոտ՝ կարո՞ղ եք տնային առաջադրանքներ կատարել», «Ձեր կարծիքով, նկար 3-ում պատկերված երեխան մինչև տնային առաջադրանքները կատարելը հանգստի կամ քնի կարիք ո՞ւնի, ինչո՞ւ»:
- Բոլոր երեք նկարները ներկայացնելուց հետո ամփոփեք գործնական առաջադրանքը: Ամփոփեք պատասխանները՝ շեշտադրելով, որ երեխայի հանգիստն ու քունը էական են իր առողջության համար: Կրկին անդրադարձեք և նշեք, որ երեխաները հանգստի և ժամանցի իրավունք ունեն:

Ուսուցչի նշումները

Աշխատանքի ընթացքում փորձեք հնարավորինս հասանելի լինել բոլոր երեք խմբերին: Խմբերը ձևավորեք ըստ երեխաների նախասիրությունների, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա խաղի ընթացքում պատկերացնել հանգստի իրավունքը:

Միջառարկայական կապեր

Հասարակագիտություն - «Մարդու հիմնարար իրավունքներ» առարկայի շրջանակում անդրադարձ է արվում նաև երեխաների իրավունքին՝ ներառյալ հանգստի և ժամանցի իրավունքը:

«Բեմական արվեստ/պար» - Ստացած գիտելիքները կարող են կիրառվել այս վարժությունների ընթացքում, քանի որ սովորողներին տրվում է տարբեր շարժումներ կատարելու ազատություն:



ԹԵՄԱ 5

Առողջության և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունք

Նպատակը: Թեմայի նպատակն է, որ սովորողները կարողանան ըմբռնել իրենց առողջության կարևորությունը և պատկերացում ունենան, թե ինչպես կարող են պահպանել, չվնասել կամ վերականգնել այն:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ

- Սովորողները հասկանան՝ որն է առողջ սնունդը և կարողանան ընտրել առողջ սնունդ իրենց համար[5]:
- Սովորողները տարբերում են ֆիզիկական վիճակներով պայմանավորված կարիքները, ինչպես նաև գիտեն՝ շրջակա միջավայրը ինչպես կարող է ազդել իրենց և ուրիշների առողջության վրա:

Թեմայի բովանդակությունը

Առողջության իրավունքին անդրադարձ է կատարվում մարդու իրավունքների վերաբերյալ մի քանի փաստաթղթում: Առողջ կյանքի և բարեկեցության ապահովումը, անկախ տարիքից, կայուն զարգացման նպատակներից է (նպատակ 3), որը աշխարհում ճանաչված է գրեթե բոլոր պետությունների կողմից և ունի որդեգրած ընդհանուր նպատակներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Երեխայի առողջության առաջնային պահպանման Ալմաթիի հռչակագիրը (ԱՀԿ Ալմաթիի հռչակագիր) առանձնացնում է նորածինների և մանկահասակ երեխաների առողջապահության իրավունքներին առնչվող դրույթներ: Միջազգային իրավունքի տրամաբանությունը բոլոր իրավունքների մասով ներառում է տվյալ իրավունքի հարգանքի, պաշտպանության և իրականացման գործառույթները ինչպես պետական մակարդակում, այնպես էլ անձնական և համագործակցային հարթություններում: Առողջության իրավունքը միջազգային իրավունքում ևս զուգակցված է առողջապահության իրավունքին, ինչը ենթադրում է, որ տվյալ իրավունքի հարգանքից բացի՝ միջազգային իրավունքն առաջարկում է մի շարք մեխանիզմներ կանխարգելման, բուժման ու խնամքի ծառայությունների և հնարավորությունների ներդրման, զարգացման ու իրականացման հարցերում:

[5] ՀՊՉՏ34, ՀՊՉՀ47, հասանելի է հետևյալ հղմամբ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 5.1.
Գնա՞նք խանութ

Վարժանքը կիրառելի է **6-12 տարեկան** աշակերտների համար:

Նպատակը: Գործնական աշխատանքի նպատակն է, որ երեխաները հասկանան՝ որն է համարվում առողջ սնունդ, և ընտրեն իրենց համապատասխան առողջ սնունդ: Այն նաև կնպաստի հասկանալու առողջապահական հաստատությունների դերը սովորողների կենսակերպի հարցում:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- սնունդ կամ սննդի նկարներով մեծ քարտեր,
- դասասենյակի երկու անկյուններում զուգահեռ դրված աթոռներ,
- զուգահեռ դրված աթոռների միջև ազատ տարածություն,
- յուրաքանչյուր սննդի տեսակի օգտակար և վնասակար հատկությունների նկարագրություն (ուսուցչի համար),
- թուղթ ու գրիչ նշումների անելու համար,
- խանութի և տան նշաններով քարտեր,
- երկու տարա կամ զամբյուղ, որտեղ տեղավորելու են «գնված սնունդը». մեկում լինելու է առողջ սնունդը, իսկ մյուսում՝ անառողջը,
- դերախաղի մեջ մտնելու միջավայր[6]**:**

Գործնական աշխատանքի ընթացքը

- Խնդրեք երեխաներին մտածել իրենց սիրելի սննդամթերքի/ուտելիքի մասին (կարող եք մինչև դասի մեկնարկը մտածել այդ մասին կամ բերել դրանցից մեկը՝ նախընտրելով միրգ- բանջարեղենը):
- Հորդորեք նրանց վերհիշել՝ ի՞նչ են կերել կամ վերջին անգամ ի՞նչ ուտելիք են խնդրել գնել իրենց համար:
- Աշակերտներին «ուղարկեք» խանութ, որպեսզի խանութում առկա մթերքներից ընտրեն (եթե մթերքները/ նկարները քիչ են՝ կարող եք երեխաներին զույգերով «ուղարկել» խանութ): Խանութից տուն վերադառնալուց հետո երեխաներին խնդրեք պահել սնունդը իրենց մոտ, մինչև բոլորն ավարտեն «գնումները»:
- Երբ բոլոր աշակերտները «կգնան» խանութ, սկսեք մեկնաբանել և ըստ

[6] Աշակերտներին տրամադրելու համար սկսեք իրենց առօրյան հիշեցնելուց: Նկարագրեք կամ հարցրեք՝ քանի անգամ են նրանք գնում խանութ, արդյոք ունենում են նախօրոք կազմած ցուցակ: Կա սնունդ, որը շատ են սիրում և միշտ խնդրում են մեծերին խանութից գնել իրենց համար:

զամբյուղների տեղավորել գնված ապրանքները: Դրանք նկարագրելիս աշխատեք օգտագործել պատկերավոր ժեստեր ու շարժումներ: Օրինակ՝ ցույց տալով ստամոքսն ու փորը շրջանաձև շարժումներով՝ բացատրել, որ եթե քաղցրավենիք շատ ուտեք՝ ձեր փորը կցավի: Առաջին մի քանի սնունդը մեկնաբանելուց հետո երեխաներին հարցրեք, թե որ տարան/զամբյուղն է առողջ սնունդ պարունակում, որը՝ ոչ: Այնուհետև երեխաներին խնդրեք հերթով զամբյուղներում տեղավորել իրենց մոտ եղած սնունդը: Ստուգեք զամբյուղների պարունակություններն ու տվեք մեկնաբանություններ՝ հնարավորինս մասնակցային դարձնելով այդ ընթացքը: Ցույց տվեք ոչ օգտակար սննդամթերք, օրինակ՝ քաղցր, գազավորված հյութ, նրանց կանգնեցրեք ու ապրանքների վրա նշում արեք, օրինակ՝ կարմիր/կանաչ մարկերով կարող եք խաչ նկարել, որը բուժհաստատությունները խորհրդանշող նշանն է: Բացատրեք նրանց այդ նշանը:

Օրինակ՝ երեխան գնել է գազար և մաստակ: Բացատրեք, որ գազարը օգտակար է, պարունակում է վիտամին Ա, որը չի ցավեցնում փորը, օգտակար է աչքերի համար, չի ավելացնում քաշը և մեզ շատ էներգիա է տալիս: Իսկ մաստակը վնասակար է մեր ատամների համար, քանի որ հաճախ մաստակները պարունակում են շաքար, ինչը ստիպում է մեզ քիչ ջուր խմել, իսկ ջուրը կարևոր է մեր կյանքի համար:

Ուսուցչի նշումները

Մինչև խաղն առաջարկելը լավ գնահատեք հնարավոր ռիսկերը: Հաշվի առեք դասարանում ներկա հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունը սահմանափակող հանգամանքները: Հաշվի առեք նաև, որ որոշ երեխաներ, իրենց հաշմանդամությունից ելնելով, առավել հաճախ են առնչվում բժիշկների հետ, որը կարող է երկու հանգամանք առաջ բերել: Մի դեպքում երեխաները կարող են կիսել իրենց փորձը ու պատմել, որ իրենք միշտ հարցեր են նախապատրաստում մինչև բժշկի գնալը (դրական փորձը կիսելը խրախուսելի է), իսկ մյուս պարագայում երեխաները կարող են ներկայացնել իրենց բացասական փորձը: Նրանք կարող են նշել, որ չեն սիրում գնալ բժշկի, որովհետև այցերը նրանց ցավ են պատճառում և այլն: Ուսուցչի խնդիրն այս պարագայում կլինի բացատրել՝ ինչով է կարևոր բժշկի դերը, ներկայացնել բժիշկներին իբրև մարդկանց, որոնց պետությունը խնդրում է, որ աջակցեն երեխաներին առողջ լինելու: Բացի այդ, օրինակներն ու դրանց մասին մեկնաբանությունները կազմելիս հաշվի առեք աշակերտների հաշմանդամության տեսակները: Բերված օրինակում գազարի հատկանիշներից աչքերի մասին խոսելիս, եթե դասարանում սովորում է տեսողական խնդիրներ ունեցող աշակերտ, ապա պետք է նրբանկատորեն գազարի այդ հատկանիշը փոխարինեք մեկ այլով, օրինակ՝ գազարի բաղադրությունը մոտ է մեր արյան բաղադրությանը, գազար ուտելով մենք հարստացնում ենք մեր արյունն ու առավել ակտիվ դառնում: Այս իրավունքը մեկնաբանելը ամենադժվար առաջադրանքներից է այն դասարաններում, որտեղ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, քանի որ պետք է զգայուն լինենք մեկնաբանելիս: Սակայն դասի

նպատակն է երեխաներին սովորեցնել իրենց այս իրավունքի մասին, որտեղ ամենակարևոր խնդիրն է բացատրել, որ մեծահասակներն ու պետությունը պետք է ստեղծեն պայմաններ, որտեղ երեխաները կկարողանան օգտակար խորհուրդ ստանալ իրենց առողջության վերաբերյալ, եթե լինի դրա կարիքը: Բացատրեք երեխաներին, որ երբ մենք հիվանդ ենք կամ մեզ վատ ենք զգում, դիմում ենք բժշկին օգնության համար: Բժիշկները մասնագետներ են, որոնք շատ լավ ճանաչում են մեր մարմինը: Բժիշկների հիմնական պարտականություններն են ստուգել հիվանդներին, հասկանալ՝ ինչ են կերել երեկ և այսօր: Պետք է բացատրել հիվանդին կամ ցույց տալ նկարների ցանկի վրա՝ ինչը առողջարար չէ: Ուսուցիչը կարող է աջակցել այս ընթացքում:







Coca-Cola

կաթ











ԽԱՆՈՒԹ
Բաց է

Գործնական աշխատանք 5.2.
Ինչպե՞ս օգնել

Վարժանքը կիրառելի է **12-16 տարեկան** աշակերտների համար:

Նպատակն է աշակերտներին սովորեցնել առողջության և առողջապահության ծառայություններից օգտվելու իրավունքի առանձնահատկությունները: Այսինքն՝ իրավունքը առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ տարբեր ապրանքներից, հարմարություններից, ծառայություններից և պայմաններից օգտվելու մասին է: Ուսուցիչը պետք է բացատրի, որ յուրաքանչյուր անձ տարբեր է իր մարմնով, հետևաբար, և՝ այս իրավունքն ավելի ճիշտ է նկարագրել որպես ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր, հասանելի չափանիշի իրավունք, այլ ոչ թե առողջ լինելու անվերապահ իրավունք, որովհետև ոչ ոք չի կարող այնպես անել, որ բոլորը միանգամայն առողջ լինեն:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- բժշկական պարագաներ՝ ըստ դերախաղի, օրինակ՝ սպիտակ բժշկական հագուստներ, գլխարկներ, վիրակապ, քայլակ և այլն,
- պատմություններ պարունակող մեթաքարտեր,
- գրենական պարագաներ նկարներ/նշաններ պատրաստելու համար:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Դասարանը կարող եք բաժանել ըստ երեխաների նախընտրության, հանդիսատեսի և դերասանական կազմի: Պատրաստ եղեք այն իրավիճակին, երբ բոլորը կցանկանան ներառվել դերասանական կազմում, ինչի համար ձեզ անհրաժեշտ կլինեն դերախաղի ավելի շատ սցենարներ:
- Դերասանական կազմում ներառեք առնվազն չորս հոգուց բաղկացած խմբեր, որտեղ մի մասը կիրականացնի հիվանդի/պացիենտի և/կամ նրա բարեկամների դերը, մյուս մասը կխաղա պետության/ հիվանդանոցի ներկայացուցիչների դերը: Այն է՝ պետությունն ունի պարտավորություն երեխաների առողջության տարրական պայմաններ ապահովելու: Դրանք են՝ վաղ մանկական տարիքից իրականացվող պատվաստումները, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը մանկապարտեզներում, դպրոցներում և երեխաների համար նախատեսված այլ վայրերում (խաղահրապարակներ, պուրակներ և հասարակական վայրեր) և այլն:
- Բացատրեք երեխաներին, որ քարտերում նշված պատմությունները պետք է ներկայացնել մնջախաղի[7] ոճով: Այսինքն՝ երեխաները պետք է ցույց տան՝ ինչ առողջական վիճակում է հայտնվում երեխան, և

[7]Չմոռանաք երեխաներին բացատրել, թե ինչ է մնջախաղը:

ինչ համաչափ միջոցառումներ է իրականացնում պետությունը:
- Դերախաղերը ցուցադրելու համար ստեղծեք խաղացանկ և երեխաներին խնդրեք նշումների համար թերթիկներ պատրաստել:
- Երեխաների հետ ներկայացումներին անուններ տվեք, որոնք կընդգրկվեն խաղացանկում:

Դերախաղ 1. Մատչելի առողջապահական հաստատություն[8]
Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխան այցելում է առողջապահական հաստատություն, որտեղ բացակայում են մատչելիության հնարավորությունները, ինչպիսիք են թեքահարթակները կամ մատչելի զուգարանները: Երեխան և նրա ընտանիքը դժվարանում են հաստատությունում շարժվել՝ ընդգծելով առողջապահական հաստատություններում շենքային հասանելիության կարևորությունը: Դերախաղով ցույց տվեք՝ ինչ պետք է անի պետությունը, որպեսզի երեխան կարողանա օգտվել բժշկական հաստատությունից:

Դերախաղ 2. Աջակցող բժշկական թիմ
Լսողության խնդիրներ ունեցող երեխան այցելում է առողջապահական հաստատություն, որտեղ բժշկական թիմը հասկանում է նրա հաղորդակցման կարիքները, ապահովում է ժեստերի լեզվի թարգմանիչներ և խնամք: Այս սցենարը ցույց է տալիս աջակցող բժշկական թիմի կարևորությունը, որը լուծում է հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ կարիքները:

Դերախաղ 3. Դեղորայքի հասանելիություն
Խրոնիկ/մշտական հիվանդություն ունեցող երեխային անհրաժեշտ են կանոնավոր դեղամիջոցներ՝ իր հիվանդությունը մեղմելու համար: Դերախաղը կարող է ցույց տալ մի իրավիճակ, երբ երեխան բախվում է մարտահրավերների՝ մատչելի և ժամանակին դեղորայք ստանալու հարցում: Այն կարող է ընդգծել բոլոր երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ դեղամիջոցների հասանելիության ապահովման կարևորությունը:

Դերախաղ 4. Հոգեկան առողջության աջակցություն
Հոգեկան առողջության խնդիրներ[9] ունեցող երեխան դժվարությունների է բախվում և՛ դպրոցում, և՛ տանը: Դերախաղը կարող է պատկերել մի իրավիճակ, երբ երեխան օգնություն է փնտրում հոգեկան առողջության մասնագետներից, որոնք խորհրդատվություն են տրամադրում և մշակում անհատական աջակցության ծրագիր: Այս սցենարն ընդգծում է հոգեկան առողջության աջակցության իրավունքը և հոգեկան առողջության պայմանների կարևորությունը:

[8] Երեխաներին հորդորեք փոփոխել անվանումներն այնպես, ինչպես իրենք են պատկերացնում:
[9] Օրինակ՝ հուզական անկայունություն, տրամադրության կտրուկ անկումներ, մեկուսացում, շփման դժվարություններ, դեպրեսիա, հոգեբանական տրավմայի հետևանքներ, սթրեսային մշտական իրավիճակ և այլն:

Դերախաղ 5. Արտակարգ իրավիճակների արձագանք
Երեխան վթարի է ենթարկվել, և անհապաղ բժշկական օգնություն է պահանջվում: Դերախաղը կարող է ցույց տալ արտակարգ իրավիճակների արձագանքման սցենար, որտեղ բուժաշխատողները և շտապ օգնության աշխատակիցները արդյունավետորեն առաջին օգնություն են ցուցաբերում և ապահովում են երեխայի անվտանգությունը: Այն ընդգծում է ժամանակին և համապատասխան շտապ բուժօգնության ծառայությունների իրավունքը:

Ուսուցչի նշումները

Նախքան դերախաղում երեխաներին ներգրավելը երեխաներից և նրանց ծնողներից կամ խնամակալներից ստացեք համաձայնություն: Խուսափեք դերախաղի ընթացքում հաշմանդամության մասին կարծրատիպերից կամ խարանող պատկերացումներից: Դրանք կարող են հաճախ հանդիպել հատկապես դեռահասների խմբում: Կարևոր է վերջինս դարձնել քննարկման թեմա՝ ընդգծելով բազմազանությունը հարգելու և ներառականությունը խթանելու կարևորությունը: Հստակորեն փոխանցեք դերախաղի կրթական նպատակները, համոզվեք, որ երեխաները հասկանում են իրենց մասնակցության նպատակն ու արդիականությունը: Ստեղծեք ուսումնական միջավայր, որտեղ երեխաները կարող են արտահայտել իրենց կարծիքը, հարցեր տալ և սովորել միմյանց փորձից: Դերային խաղի ընթացքում առաջնորդեք և աջակցեք երեխաներին՝ ապահովելով առողջության իրավունքի վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու ինքնավստահություն: Մասնակիցների միջև խրախուսեք բաց երկխոսությունը և ակտիվ ունկնդրումը: Դերախաղից հետո կազմակերպեք քննարկում[10], որտեղ երեխաները կարող են անդրադառնալ իրենց փորձառություններին և կիսել իրենց մտքերը: Քննարկեք հիմնական ուղերձներն ու հետևությունները ՝ ամրապնդելով բոլորի համար առողջապահական խնամքի հավասար հասանելիության կարևորությունը՝ անկախ հաշմանդամությունից:

Միջառարկայական կապեր

Առողջ ապրելակերպ - Մոդուլը ամբողջությամբ ներկայացնում է սովորողների առողջությանը վերաբերող տեղեկությունը՝ ֆիզիկական և հոգեկան:
Հասարակագիտություն - Թեման կապված է մարդու իրավունքների, մասնավորապես, երեխաների իրավունքների հետ, հետևաբար ուսումնասիրվում է առարկայի ենթատեքստում:

[10] Նպատակահարմար կլինի նաև, որ ուսուցիչը դերախաղի ժամանակ նշումներ անի, ապա քննարկման ժամանակ վերադառնա դրանց, մասնավորապես այն բոլոր կետերին, որտեղ երեխաների իրավունքները խախտված են եղել:

ԹԵՄԱ 6

Երեխայի՝ տնտեսական շահագործումից և զարգացումը խոչընդոտող ու վտանգավոր աշխատանքից պաշտպանված լինելու իրավունք

Նպատակն է սովորողներին օգնել ընկալելու տնտեսական շահագործումը և տարբերակելու օգնությունը շահագործումից:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ սովորողները

- Կկարողանան ճանաչել տնտեսական շահագործումը[11]:
- Կբացատրեն, թե տնտեսական շահագործումը ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ իրենց համար:

Թեմայի բովանդակությունը

Տարբեր հասարակություններում հանդիպում են դեպքեր, երբ գրեթե բոլոր երեխաները ներգրավված են տնային կամ այգեգործական աշխատանքներում, որոնց մի մասն անվիճելիորեն համարվում են շահագործման տեսակներ, օրինակ՝ աշխատանք, որը վնաս է հասցնում երեխայի առողջությանը, բնականոն զարգացմանը կամ կյանքին առհասարակ:

Շահագործումը բռնության տեսակ է, որը ներառում է պարտադրանքի տարբեր տեսակներ ու դրսևորումներ, ինչը ճակատագրական է հատկապես երեխայի ֆիզիկական և մտավոր առողջության, զարգացման և կրթության համար: Հարկավոր է հստակեցնել և առանձնացնել մի շարք գործոններ, որոնք կտարբերակեն երեխայի շահագործումը թույլատրելի և դաստիարակության ու զարգացման համար բարենպաստ աշխատանքից: Շահագործումն առաջին հերթին ենթադրում է որոշակի եկամուտ կամ շահ (օրինակ՝ ֆինանսական, տնտեսական), որը հետապնդում են շահագործողները: Երեխայի տնտեսական շահագործման դեպքերը գնահատելու համար կարևոր են ինչպես երեխայի անհատական կարողությունների ու դրանց սահմանափակումների դիտարկումը, այնպես էլ ընդհանուր միջավայրի գնահատումը: Տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ մշակութային վատ պայմանները մեծացնում են երեխայի խոցելիությունը տնտեսական շահագործման հարցում:

[11] ՀՊՉՀ37, ՀՊՉՀ49, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 6.1.
Ավելին, քան կարելի է

Վարժանքը կիրառելի է **6-12 տարեկան** երեխաների համար:

Նպատակն է աշակերտներին սովորեցնել տնտեսական շահագործման տարբերակող ու կանխորոշող երևույթները, տարբերել տնտեսական շահագործումը առօրյա պարտավորություններից և, միևնույն ժամանակ, կիրառել երևակայությունը երևույթը հասկանալու համար:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- ազատ տարածություն շարժման և բոլոր երեխաների համար տեսանելի հարթակի ստեղծում (բավարար կլինի, դասասենյակի աթոռներն ու սեղանները դասավորել պատերի տակ),
- պատմություններ պարունակող մեթաքարտեր:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Երեխաներին խնդրեք շրջան կազմել և բացազատվել՝ շարժումներ կատարելիս միմյանց չխանգարելու համար:
- Ուսուցիչը կարող է կանգնել շրջանի կենտրոնում ու տրված իրադրությունը ցուցադրել իր օրինակով, կամ կարող է լինել շրջանում կանգնածներից մեկը: Դա կախված է դասարանի կաշկանդված/չկաշկանդված լինելու հանգամանքից:
- Բացատրեք երեխաներին, որ քարտերում նշված պատմությունները ներկայացնելիս մենք կարող ենք լինել և՛ լուռ, և՛ ինչ-որ հնչյունների միջոցով կարող ենք արտահայտել այն, ինչ զգում ենք այդ պահին: Բացատրեք, որ Դուք նկարագրելու եք ընթացքը և խնդրեք երեխաներին երևակայել:
- Դուք կարող եք համեմատության պատմություններն ավելացնել, սակայն նկարագրությունը պետք է լինի այնպիսին, որ չհուշի, թե ինչ կերպ պետք է երեխան խաղարկի տվյալ իրավիճակը:
- Ցանկալի է, որ իրավիճակների մեկնաբանություններն արվեն դասի վերջում: Սակայն եթե զգում եք, որ դասարանը չի հասկանում կամ հետևում գործնական աշխատանքի տրամաբանությանը, մեկնաբանությունները կարող եք անել իրավիճակային դրվագը ներկայացնելուց հետո:

Իրավիճակ 1. Պատկերացրու դու աղավնի ես կամ ծիծեռնակ: Դու ճախրում ես օդում ազատ, անկաշկանդ: Թռչում ես, թռչում ու հասնում մի վայր, որտեղից վերցնում ես մի ճյուղ և այն հասցնում քո բույնը: Նորից ես ճախրում, թռչում ես դեպի նույն տեղը, թեթև, շատ թեթև: Գնում ես, որպեսզի ևս մեկ ճյուղ վերցնես, բայց հանկարծ ինչ-որ մեկը քո կտուցից կախում է ոչ թե ճյուղ, այլ ծանր քար, շատ մեծ քար: Դու ուզում ես բարձրանալ, սակայն դժվարանում ես: Քարը քեզ համար ծանր է և քեզ թույլ չի տալիս բարձրանալ: Հետո մի կերպ պոկվում ես գետնից, թռչում ես քարը կտուցիդ, մի կերպ հասնում ես քո բույնը, մի արծիվ վերցնում է քարը բնից ու սլանում վերև:

Իրավիճակ 2. Պատկերացրու, որ դու մի գեղեցիկ այգում ծաղկած ծաղիկ ես: Քո ծաղկաթերթերը գունագեղ են, և քո բուրմունքը լցնում է օդը: Անցնող մարդիկ հիանում են քո գեղեցկությամբ և հաճույք ստանում քո ներկայությունից: Բայց մի օր գալիս է մի մարդ, քեզ պոկում, արմատախիլ է անում: Նա քեզ տեղավորում է ծաղկեփնջի մեջ, որտեղ դու կամաց-կամաց թառամում ես՝ չկարողանալով իրականացնել այգին գեղեցկացնելու և ուրիշներին ուրախություն պատճառելու քո երազանքը:

Իրավիճակ 3. Պատկերացրու, որ դու փոքրիկ ձկնիկ ես, որն ազատ լողում է մաքուր և վճիտ գետում: Դու վայելում ես զով ջուրը և այլ ձկների ընկերակցությունը: Բայց մի օր ցանցը հայտնվում է ջրում՝ բռնելով քեզ և այլ ձկների: Դուք պայքարում եք ազատվելու համար, բայց ձեր ջանքերն ապարդյուն են: Քեզ հանում են ջրից և դնում փոքրիկ ակվարիումի մեջ: Դու սահմանափակված ես և անկարող ես լողալ նախկինի պես: Քո բնական միջավայրը քեզնից խլվում է, և դու դառնում ես ուրիշների համար պարզապես զվարճանքի առարկա:

Իրավիճակ 4. Պատկերացրու, որ դու ծառ ես մեծ, փարթամ անտառում: Քո ճյուղերը ձգվում են դեպի երկինք՝ ապաստան տալով տարբեր կենդանիների: Բայց մի օր գալիս են անտառահատները և քեզ կտրում: Նրանք մերկացնում են կեղևդ, տերևներդ և ի վերջո քեզ տապալում են գետնին: Դու վերածվում ես փայտանյութի, օգտագործվում շինարարության կամ վառելիքի համար: Քո՝ որպես կենդանի էակի և քո ներդրումը էկոհամակարգում անտեսվում են՝ հանուն մարդկային կարիքների և շահույթի: Իրավիճակները խաղալուց հետո խնդրեք երեխաներին պատասխանել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ զգացիք, երբ թռչուն/ծաղիկ/ ձուկ/ ծառ էիք:
- Ի՞նչը փոխվեց թռչունի, ծաղիկի, ձկան և ծառի կյանքում:
- Ո՞րն էր ամենադժվար պահը, ո՞րն էր ամենահաճելի իրավիճակը:
- Պատմությունների ո՞ր հատվածում էիր քեզ ավելի լավ զգում՝ առաջի՞ն, թե՞ երկրորդ:
- Կարո՞ղ եք վերապատմել այս պատմությունները: Ինչպիսի՞ այլ ավարտ կցանկանայիք տեսնել այս պատմությունների համար:

Ուսուցչի մեկնաբանություններ

Երեխաների մեկնաբանությունները լսելուց հետո բացատրեք նրանց, որ իրենք իրավունք ունեն զերծ մնալու տնտեսական շահագործումից, վնասակար պայմաններում աշխատելուց, չզրկվելու կրթությունից կամ չենթարկվելու տնտեսական չարաշահման: Երեխաների համար կարևոր է իմանալ իրենց իրավունքները և իրազեկված լինել հետևյալ կետերի մասին.

Կրթության իրավունք. երեխաներն իրավունք ունեն ստանալու այնպիսի կրթություն, որը նրանց հնարավորություն կտա զարգացնելու իրենց ներուժը պայծառ ապագայի համար: Այս իրավունքը թույլ է տալիս երեխաներին հարկադրված չաշխատել իրենց կրթության հաշվին:
Պաշտպանություն վտանգավոր աշխատանքից. երեխաներն իրավունք ունեն պաշտպանվելու մտավոր, ֆիզիկական, սոցիալական կամ բարոյապես վտանգավոր և վնասակար աշխատանքից: Նրանք չպետք է ներգրավվեն այնպիսի աշխատանքի մեջ, որը վնասում է իրենց առողջությունը, խանգարում զարգացմանը կամ ընդհանուր բարեկեցությանը:
Խաղի և ժամանցի կարևորությունը. երեխաներն իրավունք ունեն խաղալու, զվարճանալու և վայելելու իրենց մանկությունը: Այս իրավունքը ընդգծում է երեխաների հանգստի, մշակութային և գեղարվեստական գործունեությանը մասնակցելու, ժամանակ ունենալու անհրաժեշտությունը:
Իրենց իրավունքների իրազեկում. երեխաները պետք է տեղյակ լինեն իրենց իրավունքների մասին և իրավունք ունենան բարձրաձայնելու, եթե զգում են, որ դրանք ոտնահարվում են: Նրանք կարող են օգնություն խնդրել վստահելի մեծահասակներից, ուսուցիչներից կամ այն կազմակերպություններից, որոնք կարող են աջակցել և պաշտպանել իրենց իրավունքները:
Զեկուցել շահագործման մասին. երեխաները պետք է իմանան, թե ինչպես ճանաչել և զեկուցել տնտեսական շահագործման ցանկացած դեպքի մասին, որին ականատես են լինում կամ զգում: Նրանց համար շատ կարևոր է գիտակցել, որ իրենք պաշտպանված լինելու իրավունք ունեն, որ նման խնդիրների լուծման համար կան մեխանիզմներ:
Երեխաներին տրամադրելով այս վերլուծությունը՝ նրանց հնարավորություն ենք տալիս հասկանալու իրենց իրավունքները և միջոցներ ձեռնարկելու տնտեսական շահագործման ցանկացած ձևի դեմ, որին կարող են հանդիպել: Կարևոր է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները ապահով են, որտեղ նրանց աջակցում և խրախուսում են, որպեսզի իրականացնեն իրենց երազանքներն ու ձգտումները, որտեղ նրանց աշխատանքային շահագործման չեն ենթարկում:

Գործնական աշխատանք 6.2.
Մի երեխայի պատմություն

Վարժանքը նախատեսված է **10-15 տարեկան** երեխաների համար:

Նպատակն է աշակերտներին սովորեցնել տնտեսական շահագործման տարբերակիչ ու կանխորոշիչ հատկանիշները, տարբերակել տնտեսական շահագործումը առօրյա պարտականություններից, գնահատել հնարավոր ռիսկերն ու մտածել իրենց ընձեռված հնարավորությունների և վնասների մասին:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.

- ազատ տարածք՝ շարժման և բոլոր երեխաների համար տեսանելի հարթակ (բավարար կլինի, եթե դասասենյակի աթոռներն ու սեղանները շարվեն պատերի տակ),
- քարտեր, որտեղ մի կողմում կլինի գրված բառը, մյուս կողմում՝ նույն բառի պատկերը:

Գործնական աշխատանքի ընթացքը

- Երեխաներին խնդրեք շրջան կազմել:
- Հորինեք որևէ պատմություն: Ընտրեք մեկ կամ մի քանի «պատմության հերոս» և նրանց ու երեխաներին առանձին բացատրեք իրենց դերերը: Կախված դասարանի մեծությունից՝ կարող եք ընտրել երեքից ավել «պատմության հերոս»:
- «Պատմության հերոսներին» բացատրեք, որ իրենք երեխաներ են, որոնց տրվելու են տարբեր առարկաներ, հնարավորություններ, և նրանք պետք է արձագանքեն դրանց իրենց հույզերով՝ ուրախություն, տխրություն, դժգոհություն, հոգնածություն, ցավի զգացողություն և այլն: Նրանք պետք է դանդաղ շարժվեն շրջանով և ընտրեն այն երեխային, որը կտա իրենց մեկ առարկա: Հաշվարկեք՝ առավելագույնը քանի աշակերտ կա դասարանում, քանի պատմություն եք պատմելու և քանի հոգու կարող եք ընտրել «պատմության հերոս»:
- Մյուս աշակերտներին տրամադրեք մեկական նկար/քարտ: Բացատրեք նրանց, որ միայն իրենց ընտրելուց հետո նրանք կարող են ակնհայտ ցուցադրել ու տալ քարտը «պատմության հերոսներին»:
- «Պատմության հերոսները» սկսելու են պտտվել շրջանի ներսում, իսկ այդ ժամանակ ուսուցիչը սկսելու է պատմությունը[12]: «Լինում է մի տղա/աղջիկ, որը յոթ տարեկան էր: Նա սիրում էր խաղալ բակում, հաճախում էր դպրոց ու լավ էր սովորում: Մի օր...» (ու աշակերտը մոտենում է շրջանի ներսում կանգնած երեխաներից մեկին ու վերցնում քարտը) ուսուցիչը շարունակում է պատմել ըստ քարտի, իսկ «պատմության հերոսը» պետք

[12] Դուք ազատ եք իմպրովիզ անելու և սկսելու պատմությունը այլ կերպ:

է զգացմունքներով ցույց տա՝ ինչ է զգում քարտը վերցնելուց հետո: Ուսուցչի դերն է հասկանալ ու հստակորեն մեկնաբանել «պատմության հերոսի» զգացածը:

- Ցանկալի է իրավիճակների մեկնաբանություններն անենք դրանք խաղալուց հետո: Սակայն եթե զգում եք, որ դասարանը չի հասկանում կամ հետևում դասաժամի տրամաբանությանը, ապա մեկնաբանությունները կարող եք անել յուրաքանչյուր իրավիճակը խաղալուց հետո:

Հնարավոր քարտերը.

- Կրթություն/ դպրոց
- Գումար
- Անձնագիր և ինքաթիռի տոմս
- Հեռախոս
- Օնլայն աշխատանք
- Աշխատանք թունաքիմիկատների գործարանում
- Գիշերային աշխատանք
- Առողջ սնունդ
- Գրքեր

Միջառարկայական կապեր

Ֆինանսական կրթություն - Թեման շոշափում է ֆինանսական գրագիտության որոշ բաղադրիչներ, ուսուցիչը կարող է այն կապել ֆինանսական կրթության հետ:
Հասարակագիտություն - Թեման կապված է մարդու իրավունքների, մասնավորապես, երեխաների իրավունքների հետ, հետևաբար ուսումնասիրվում է առարկայի ենթատեքստում:

Ուսուցչի մեկնաբանություններ

Պատմությունները պատմելիս և հուզական արձագանքները նկարագրելիս երեխաներին կարող եք հիշեցնել հուզական արձագանքման տարբերակները, որոնք իրենց արդեն ծանոթ են: Երբեմն կարող է կարիք առաջանալ պատմության համար հերոս ընտրված երեխաներին առավել մանրամասն նկարագրել իրավիճակը, որպեսզի կարողանան փոխանցել հուզականությունը: Պատմությունները պետք է շարադրել երեխաների համար հնարավորինս մատչելի լեզվով: Հաշվի առեք, որ որոշ երեխաներ, ելնելով իրենց առողջական խնդիրներից, կարող են հրաժարվել առաջադրանքից: Ընդունեք դա առանց քննարկման և փոխեք թեման այդ երեխայի համար:

Երեխայի վերականգնման և վերաինտեգրման իրավունք

Նպատակը: Թեմայի ուսուցման նպատակն է սովորողների շրջանում սերմանել հավասարության և ապրումակցման զգացում՝ հեշտացնելով երեխաների վերականգնման և վերաինտեգրման տարբեր գործընթացները:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ

- Սովորողները իմանան, որ անկախ իրենց առողջական, սոցիալական, տնտեսական և այլ խնդիրներից՝ իրենք ունեն մյուսների հետ ինտեգրվելու հավասար իրավունք[13]:
- Սովորողները հավասար վերաբերվեն իրենց շրջապատի (դասարան, ընտանիք, բակի ընկերներ) այլ երեխաներին՝ անկախ նրանց սոցիալական, ֆիզիկական կամ այլ խնդիրներից:

Թեմայի բովանդակությունը

Այս իրավունքն անհրաժեշտ է դիտարկել, երբ տեղի է ունենում երեխայի իրավունքների պաշտպանության ձախողում և հարկավոր է վերացնել առաջացած վնասները, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հնարավորինս նվազեցնել վնասը: Այդ պարտավորություններն ու ուղղություններն ամփոփվում են երեխայի վերականգնման և վերաինտեգրման իրավունքի շրջանակներում: Որպեսզի իրավունքներն իմաստավորվեն, անհրաժեշտ են արդյունավետ մեխանիզմներ խախտված իրավունքը վերականգնելու համար: Հատկապես երեխաների նկատմամբ այս իրավունքի իրացումը պետության համար պարտադիր է, քանի որ, ի տարբերություն չափահաս անձանց, երեխաների հետագա զարգացումը, ապագան և կյանքի յուրաքանչյուր ոլորտ կախված են այն կարգավիճակից կամ իրադրությունից, որում նրանք հայտնվում են նաև այս կամ այն իրավունքի խախտման հետևանքով: Վերականգնումն ու վերաինտեգրումը վերաբերում են բացառապես բոլոր իրավունքների հետևանքով առաջացած բացասական հետևանքների նվազեցմանը կամ վերացմանը: Օրինակ, եթե առողջության, զինված հակամարտության, ֆինասնական և այլ (սա ամբողջական ցանկը չէ) պատճառներով երեխան դուրս է մնում բնականոն կյանքի ընթացքից, կրթությունից, չի մասնակցում հասարակական կյանքին, ձեռք է բերում մշտական կամ ժամանակավոր առողջական խնդիրներ, անհրաժեշտ է ոչ միայն վերականգնել նրա ներկայությունն ու ներգրավումը, օրինակ, կրթության կամ հասարակության մեջ, այլ նաև

[13] ՀՊՉՀ38, հասանելի է հետևյալ հղմամբ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

ապահովել նրա լիարժեք վերաինտեգրումը և վերասոցիալականացումը: Կարևոր է իմանալ, որ այս իրավունքը պետք է հնարավորինս իրականացվի հասարակությունում, բնականոն ընթացքում, առանց հատուկ հաստատությունների ու առանց պարտադրանքի:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 7.1.
Վանկերով պար

Առաջադրանքը նախատեսված է **6-10 տարեկան** երեխաների համար

Նպատակն է սովորողներին հավասար հնարավորություն տալ ստեղծագործաբար ներկայացնելու իրենց և ուրիշներին՝ հարգելով բոլորի անձնական տարածքը:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.
- ազատ տարածք՝ անկաշկանդ պարային շարժումներ իրականացնելու համար,
- հնարավորության դեպքում որևէ՝ երաժշտություն:

Գործնական աշխատանքի ընթացքը

Գործնական աշխատանքի կանոնը հետևյալն է՝ սովորողները պետք է ներկայացնեն իրենց անունը պարային շարժումներով՝ կատարելով այնքան շարժում, որքան վանկ ունի իրենց անունը: Որպեսզի երեխաների համար պարզ լինի, առաջարկում ենք, որ ուսուցիչն ինքը սկսի իր օրինակով: Պատկերացնենք ուսուցչի անունը Գայանե է: Գայանե անունը բաղկացած է երեք վանկից՝ Գա-յա- նե, հետևաբար ուսուցիչը պետք է պարի՝ երեք տարբեր տեսակի շարժում կատարելով: Ուսուցչի՝ իր օրինակով վարժանքի մեկնարկը նաև կնպաստի անկաշկանդ միջավայրի ստեղծմանը և սովորողները իրենց ավելի ազատ կզգան պարային շարժումներ կատարելիս: Գործընթացն առավել աշխույժ անցկացնելու համար ուսուցիչը կարող է նաև երաժշտություն միացնել:
Ձեր օրինակից հետո հարթակը տրամադրեք սովորողներին՝ իրենց անունները վանկերի բաժանելու և դրանք պարային շարժումներով արտահայտելու համար: Յուրաքանչյուր սովորողի իր անունը պարային շարժումներով ներկայացնելիս՝ խնդրեք մյուսներին զուգահեռ կրկնել շարժումները: Սա հնարավորություն կտա սովորողներին իրենց խմբում կարևորելու ամեն մեկի տեղն ու դերը, անունը, ինչպես նաև յուրահատուկ լինելը: Նույն տրամաբանությամբ շարունակեք այնքան, մինչև դասարանում բոլոր սովորողները պարով ներկայացնեն իրենց անունները:

Կարևոր է, որ սովորողների պարային շարժումները, ինչպես նաև երևակայությունը չսահմանափակելու համար ստեղծեք այնպիսի միջավայր, որը կօգնի իրենց ստեղծագործելու: Օրինակ՝ կարող եք ընթացիկ հուշող հարցեր տալ.

- Արդյոք իր անվան վանկերը ակտի՞վ շարժումներ են ենթադրում, թե՞ պասիվ:
- Ինչպե՞ս/ինչի՞ նման ես ուզում շարժվել, երբ լսում ես այդ վանկերը (ռոբոտի, հովազի, թռչունի և այլն):

Շատ կարևոր է վարժանքի ընթացքին ներառել բոլոր սովորողներին: Եթե դասարանում կան սովորողներ, որոնք վերաինտեգրվել են որևէ առողջական խնդրի հաղթահարումից հետո կամ ունեն ֆիզիկական կամ հենաշարժողական խնդիրներ, ապա խնդրեք նրանց «վանկերով պարել» այն եղանակով, ինչպես որ կկարողանան (շարժել գլուխը կամ մարմնի այլ հատված, կամ վանկերն արտահայտել աչքերով, դիմախաղերով կամ յուրովի):

Ուսուցչի մեկնաբանություններ

Տարրական դպրոցում՝ նախաայբբենական փուլում գտնվող երեխաների համար կարող է անհրաժեշտություն առաջանալ բացատրելու, թե ինչ է վանկը, ապա մի քանի անգամ վանկատել բառերը, որպեսզի բոլոր երեխաները ցանկություն ունենան շարժումներով արտահայտել իրենց անունը: Կարող եք մտածել այլ տարբերակներ, օրինակ՝ ձայնային արձագանքներ, կենդանիների ձայներ կամ անձայն շարժումներ: Կարևոր է հաշվի առնել երեխաների նախընտրությունները:

Գործնական աշխատանք 7.2.
Առաջ արի

Առաջադրանքը նախատեսված է **14-16 տարեկան** երեխաների համար:

Վարժանքի **նպատակն է** սովորողներին հնարավորություն տալ զգալու իրենց տարբեր սոցիալական դերերում և ապրումակցում ձևավորել իրենց շրջապտում ապրող տարբեր մարդկանց նկատմամբ:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.

- ազատ տարածք՝ շարքով կանգնելու, ապա նաև՝ առաջ գալու համար,
- նախապես տպված և պատրաստած սոցիալական տարբեր դերեր (Գործնական աշխատանքում տեղադրված են առաջարկվող դերեր, սակայն դուք ևս կարող եք ավելացնել Ձեր տարբերակները):

Գործնական աշխատանքի ընթացքը

Գործնական աշխատանքի մեկնարկին սովորողները տուփից վերցնում են նախապես կտրտված թերթիկներ, որոնց վրա նշված են դերերը: Ուսուցիչը կարող է իր ձեռքում պահել, իսկ սովորողները կարող են քաշել թերթիկները: Սոցիալական դերերը կարող են լինել՝

- պատերազմում հայրիկին կորցրած տղա,
- հենաշարժողական խնդիրներ ունեցող աղջիկ (դպրոցական),
- ընտանիքում գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված դպրոցական,
- եզդի աղջիկ (դպրոցական),
- ֆինանսապես ապահովված ընտանիքի երեխա (դպրոցական),
- սիրիահայ դպրոցական, որը հայերեն չգիտի,
- բուլինգի ենթարկվող դպրոցական աղջիկ, որը ընկերներ չունի,
- բազմազավակ ընտանիքում ապրող տղա (դպրոցական),
- ընտանեկան բռնության ենթարկվող տղա (դպրոցական),
- Արցախից տեղահանված դպրոցահասակ աղջիկ,
- ծնողների կողմից լքված դպրոցահասակ աղջիկ,
- խոսքային խնդիրներ ունեցող դպրոցահասակ տղա:

Դերերը կարող են փոփոխվել կամ լրացվել ուսուցչի կողմից: Անհրաժեշտ է ունենալ աշակերտների թվով դերեր, որպեսզի բոլորը կարողանան ներգրավվել աշխատանքին:
Դերերը վերցնելուց հետո խնդրեք սովորողներին չբարձրաձայնել իրենց դերը և կանգնել մեկ ուղիղ հավասար շարքով: Այնուհետ ինքներդ կանգնեք նրանց դիմաց և ընթերցեք ձեր ձեռքի հարցերը: Եթե սովորողի դերում այդ հարցի պատասխանը «այո» է, ապա խնդրեք քիչ առաջ գալ, եթե «ոչ» է, ապա խնդրեք մնալ տեղում: Շարունակեք ընթերցել հարցերն այս տրամաբանությամբ:

Հարցերը կարող են լինել հետևյալը.

- Դուք կարողանո՞ւմ եք բավականաչափ ժամանակ տրամադրել ձեր կրթությանը:
- Դուք կարողանո՞ւմ եք ազատ և միայնակ տեղաշարժվել ձեր համայնքում/ բնակավայրում:
- Դուք հե՞շտ եք հաղորդակցվում ձեր դպրոցում/ միջավայրում:
- Դուք ձեր ազատ ժամանցը կազմակերպելիս կարողանո՞ւմ եք խաղալ ձեր ընկերների հետ:
- Ձեր ընտանիքում ձեր կարծիքը լսո՞ւմ են, դուք ձեզ ապահով և կարևո՞ր եք զգում:
- Ձեր դասարանում ձեզ վերաբերվո՞ւմ են որպես հավասարը հավասարի:
- Դուք կարողանո՞ւմ եք մասնակցել դասարանական էքսկուրսիաներին կամ այլ միջոցառումների:

Հարցերից հետո սովորողների դասավորվածությունը կփոփոխվի՝ կախված այն բանից, թե որքան են առաջ եկել: Հարցերի ավարտից հետո խնդրեք,

որ նույն դիրքում մնան, և քննարկում սկսեք: Կարող եք հերթով հարցնել մասնակիցներին, թե իրենք ինչ դեր ունեին և ինչու են այդ դիրքում: Կարող եք սկսել ամենավերջում կանգնածներից և հարցնել, թե ինչու են այդքան քիչ առաջ եկել, և խնդրեք մանրամասնել: Բացի դերի քննարկումից և այն բանից, թե որ հարցերի դեպքում ինչպես են վարվել և ինչու, կարող եք նաև ուղղել հետևյալ հարցերը.

- Խաղի ընթացքում նայո՞ւմ էիք ձեր շուրջը, մյուսներին, թե միայն ձեր քայլերն էիք կատարում:
- Ի՞նչ էիք զգում, երբ ոմանք առաջ էին գնում, իսկ մյուսները մնում էին հետևում:
- Այդ դերում ինչպե՞ս էիք ձեզ զգում:
- Երբևէ մտածե՞լ էիք, թե ձեր դերը իրական կյանքում կրող մարդիկ ի՞նչ դժվարություններ կամ ի՞նչ խնդիրներ կարող են ունենալ:

Ուսուցչի նշումները

Կարևոր է խաղ-վարժանքը հնարավորինս ներառող դարձնել: Դրա համար նախապես հաշվի առնելով մասնակիցների ֆիզիկական և մտավոր կարողությունները՝ կարող եք փոխել խաղի ընթացքում որոշ կանոններ: Մասնավորապես, եթե կան հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաներ, ապա քայլերով առաջ գալու փոխարեն կարող եք այլ հնար առաջարկել: Օրինակ՝ նախապես ունենալ շախմատի կամ շաշկիի քարեր, որոնք սովորողները առաջ կիրեն: Հարցերը տալիս և հետագայում քննարկելիս անհրաժեշտ է շատ զգույշ և նրբանկատ լինել: Եթե դասարանում նշված դերերը կրողներ կան, կարող եք այդ դերերը բացառել, եթե մտավախություն ունեք, որ կարող են դրանից վատ զգալ: Հարցերի օգնությամբ անպայման պետք է շեշտել մեր ամենօրյա կյանքում ապրումակցման անհրաժեշտությունը:

Միջառարկայական կապեր

Ես և իմ հայրենիքը - Քանի որ այս թեմայում արծարծվում է ազգային փոքրամասնություններին վերաբերող բովանդակություն, սովորողները այդ մասին գիտելիքներ ստանում են առարկայի շրջանակում:
Պատմություն - Արցախից տեղահանված հայերի մասին կամ տեղահանման պատճառների մասին հիմնական տեղեկությունը սովորողներին հասանելի է հայոց պատմության դասագրքերից:

ԹԵՄԱ 8

Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունք

Նպատակը: Թեմայի ուսուցման նպատակն է սովորողների մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների և հատուկ կարիքների վերաբերյալ պատկերացում ձևավորել:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին ակնկալվում է, որ

- Սովորողները ճանաչեն սեփական մարմինը, իմանան, թե ինչպես օգնեն իրենց շրջապատում գտնվող այլ մարդկանց:
- Սովորողները հավասար վերաբերվեն շրջապատում (դասարան, ընտանիք, բակի ընկերներ) իրենցից ֆիզիկապես տարբերվողներին[14]:

Թեմայի բովանդակությունը

«Հաշմանդամություն» եզրույթը չունի համընդհանուր սահմանում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (ՀՈՒԱԻԿ) սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց որպես մարդիկ, «[…] ովքեր երկար ժամանակ ունեն ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններ, ինչը տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող է խոչընդոտել, որ այդ մարդիկ լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին՝ մյուսների հետ հավասար հիմունքներով»: Միևնույն ժամանակ, ՀՈՒԱԻԿ-ի նախաբանում նշվում է, որ «[…] հաշմանդամությունն էվոլյուցիոն երևույթ է, և արդյունք է այնպիսի փոխազդեցության, որը տեղի է ունենում առողջական խնդիրներ ունեցող անձանց վերաբերմունքի ու շրջապատի սահմանափակումների միջև, որոնք խոչընդոտում են նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքում»[15]: Սահմանումից հետևում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը մեծապես կախված է հասարակության վերաբերմունքից: Այս երևույթը նույն կերպ կարող է մեկնաբանվել երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում, երբ դիտարկվում է երեխաների հատուկ պաշտպանության կարիքը՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից: Այդ պարագայում հստակ է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները հատկապես պետք է շեշտադրվեն և առանձնացվեն ոչ միայն համապատասխան մասնագետների, այլ նաև հասարակության և այդ հարցում ազդեցիկ այլ դերակատարների կողմից:

[14] ՀՊՉՀ41, ՀՊՉՀ47 հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

[15] ՀՈՒԱԻԿ, նախաբան, կետ «ե»:

Հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվում են հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր իրավունքներից՝ հատուկ ուշադրության արժանանալով ու ելնելով նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններից և զարգացման աստիճանից: Հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանությունն իրականացվում է՝ ելնելով ոչ միայն հաշմանդամ, այլ նաև երեխա լինելու հանգամանքից, ըստ այդմ՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող սկզբունքներն ու իրավունքները կիրառելիս երեխաներին տրվում է առաջնահերթություն:

ՀՈԻԱԻԿ-ը սահմանում է **ութ հիմնարար սկզբունք**.

ա. Հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ:

բ. Խտրականության բացառում:

գ. Հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն:

դ. Հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը:

ե. Հնարավորությունների հավասարություն:

զ. Մատչելիություն:

է. Հավասարություն տղամարդկանց և կանանց միջև:

ը. Հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ և հարգանք նրանց՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 8.1.
Հետևիր ինձ

Առաջադրանքը նախատեսված է **10-18 տարեկան** երեխաների համար:

Վարժանքի **նպատակն** այն է, որ երեխաները ուսումնասիրեն, թե ինչպես են իրենց մարմինները շարժվում և արձագանքում տարբեր իրավիճակներում, և թե ինչպես կարող ենք ուշադրություն դարձնել և օգնել միմյանց ֆիզիկապես:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.

- ազատ տարածք՝ անկաշկանդ շարժումներ անելու համար,
- հնարավորության դեպքում որևէ երաժշտություն,
- ստեղծել մի միջավայր, որտեղ երեխաները միմյանց կմոտենան ըմբռնումով և հարգանքով, կհասկանան, թե ինչ կարող են զգալ, եթե կորցնեն ֆիզիկական հմտությունը (այս դեպքում՝ տեսողությունը):

Գործնական աշխատանքի ընթացքը

Երեխաները աշխատելու են երկուական զույգերով (բաժանում է ուսուցիչը): Մտածեք այնպես ձևավորել զույգերը, որ երեխաները, որոնք սովորաբար միասին չեն աշխատում, ընդգրկվեն նույն զույգում, և որ ֆիզիկական տարբեր հնարավորություններ ու առանձնահատկություններ ունեցող երեխաները միասին աշխատեն: Վարժությունը ենթադրում է, որ երեխաներից մեկն առաջնորդելու է մյուսին և վստահություն ներշնչելու միջոցով զույգն առանց տեսնելու կհետևի իրեն:
Երեխաներից մեկն աչքերը փակում է, իսկ մյուսը բաց է պահում իր աչքերը: Աչքերը բաց երեխան ձեռքերը մեկնում է՝ ափերը վեր: Ընկերը փակ աչքերով իր ափերը դնում է մյուսի ափերի վրա: Եթե երեխան դժվարանում է մեկնել երկու ձեռքերը, կարող է մեկնել միայն մի ձեռքը կամ թևը: Եթե երեխան չունի ձեռքերից մեկը կամ ձեռքը օգտագործելու հնարավորություն, ապա դիտող երեխան կարող է ընտրել այլ ձևով մյուս երեխային հետևելու պայմանը, օրինակ՝ արմունկը դնել ուսին կամ, եթե մարմնի բարձրությունը տարբերվում է, ազդրը՝ ուսին: Պարզապես հետևեք, որ երեխաները փոխադարձ համաձայնությամբ որոշեն դա:
Երբ երեխաները պայմանավորվում են, թե ինչպես ֆիզիկական կապի դուրս գան միմյանց հետ, նրանցից մեկը փակում է իր աչքերը, իսկ մյուսը զգուշորեն առաջնորդում է նրան սենյակով: Այն երեխան, որը ուղղորդում/տանում է մյուսին, պետք է հաշվի առնի, որ մյուս զույգերի մեջ ևս կարող են չտեսնել, այդ իսկ պատճառով պետք է դանդաղ և ուշադիր շարժվել:
Ուղղորդեք երեխաներին բացազատվելու մյուսներից: Համոզվեք, որ ով էլ լինի առաջնորդող երեխան, չի բախվի մյուսներին:
Երբ երեխաները սկսում են ակտիվանալ, առաջնորդող երեխան կարող է մարտահրավեր նետել մյուսին, օրինակ՝ մեծացնելով արագությունը, փոխելով տեմպը, ստիպելով մյուսին կռացած շարժվել, փոխելով ուղղությունը կամ ընտրելով շրջանաձև ուղիներ:

Ուսուցչի նշումները

Երբ ուսուցիչը զգում է, որ սենյակում հանգստություն է, նա կարող է ֆոնային երաժշտություն միացնել: Թույլ տվեք, որ վարժությունը տևի առնվազն տասը րոպե, որպեսզի երեխաները ժամանակ ունենան դրա մեջ իսկապես ընդգրկվելու: Այնուհետև փոխեք դերերը, որ «առաջնորդողը»

դառնա «հետևող»:
Երբ բոլոր երեխաները երկու դերերն էլ փորձում են, ամբողջ խումբը հավաքվում է քննարկման:

Կարելի է խմբին ուղղել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ զգացողություն ունեիք, երբ մեկ ուրիշը առաջնորդում էր ձեզ:
- Կա՞ր ինչ-որ սարսափելի բան:
- Զավեշտալի բան կա՞ր:
- Դուք զգացե՞լ եք ինչ-որ անհարմարություն:
- Ե՞րբ օգնության կարիք զգացիք:
- Ի՞նչ հուշում ունեք այն մարդկանց, որոնք պատրաստվում են ուղղորդվել նման ընկերոջ միջոցով:
- Կա՞ ինչ-որ բան՝ կապված ձեր մարմնի և մտքի հետ, որի մասին մտածեցիք, երբ ձեզ առաջնորդում էին: Կամ՝ երբ ղեկավարում էիք ձեր ընկերոջը, նկատեցի՞ք որևէ բան, որի մասին նախկինում չէիք մտածել:

Գործնական աշխատանք 8.2.
Շրջակայքի խուզարկուներ

Առաջադրանքը նախատեսված է **10-18 տարեկան** երեխաների համար:

Վարժության **նպատակն է**, որ ուսանողները բացահայտեն շրջապատը և քննադատաբար դիտարկեն՝ արդյո՞ք շրջապատը հարմարեցված է յուրաքանչյուրի կարիքներին:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Անհրաժեշտ նյութեր և միջավայր.

- յուրաքանչյուր խմբի համար փոքրիկ բարձիկ կամ թուղթ, մատիտ,
- հնարավորության դեպքում՝ որևէ երաժշտություն:

Գործնական աշխատանքի ընթացքը

Վարժության ընթացքում երեխաները կդառնան «շրջակայքի խուզարկուներ», որպեսզի ուշադիր զննեն, թե ինչպես են կառուցված այն տարածքներն ու սենյակները, որտեղ նրանք ապրում և անցկացնում են իրենց ժամանակը:
Երեխաները կարող են աշխատել երեք հոգանոց խմբերով:
Ուսուցիչը նախ հավաքում է բոլոր երեխաներին և տեղեկացնում, որ նրանք այժմ դառնալու են «շրջակայքի հետախույզներ»: Ուսուցիչը նշում է, որ ոչ բոլորն ունեն նույն հնարավորությունները: Ոմանց համար դրանք

սահմանափակ են: Ոմանք տեղաշարժվում են սայլակով, մյուսները քայլում են: Ոմանք չեն կարող տեսնել, իսկ մյուսները կարող են չլսել:

Այնուհետև խնդրեք երեխաներին ուշադիր զննել սենյակը և գտնել տարբեր իրեր, որոնք կարող են խնդրահարույց լինել որոշ մարդկանց համար: Օրինակ, եթե աթոռը շատ բարձր է, ցածրահասակ մարդու համար կարող է դժվար լինել նստելը: Կամ եթե շեմը բարձր է, կարող է դժվար լինել անվասայլակով անցնելը:
Խնդրեք երեխաներին նշել, թե որ սենյակն են ուսումնասիրում: Այնուհետև խնդրեք նրանց գրի առնել (կամ պատկերել, եթե երեխաները չեն կարողանում գրել) այն դժվարությունները (փոքր կամ մեծ), որոնք, նրանց կարծիքով, կարող են ի հայտ գալ: Դրանցից յուրաքանչյուրն էլ կարևոր է:
Սենյակը ուսումնասիրելու և ամեն ինչ գրի առնելու համար հատկացրեք 15 րոպե: Եթե սենյակները շատ են, և խմբի ժամանակը ներում է, նրանք կարող են ուսումնասիրել նաև մեկ այլ սենյակ:
Երբ «շրջակայքի բոլոր հետախույզները» ավարտում են աշխատանքը, խումբը կրկին հավաքվում է: Այնուհետև խմբերից մեկը ներկայացնում է, թե ինչ անհարմարություններ են գտել: Խնդրեք նրանց այդ բացերը լրացնելու նպատակով առաջարկություններ անել: Միգուցե դուք կարող եք հեռացնել բարձր շեմը կամ բարձր աթոռը փոխարինել այնպիսի աթոռով, որը հնարավոր է բարձրացնել և իջեցնել: Հորդորեք երեխաներին գտնել ստեղծագործական լուծումներ:
Վերջում բոլոր խմբերը միասին կարող են նախագծել համընդհանուր ձևավորված դասասենյակ, որը հարմար կլինի բոլորի համար՝ անկախ հաշմանդամությունից:

Ուսուցչի մեկնաբանություններ

Ուսումնասիրման ընթացքում կարող են առաջանալ որոշ բարդություններ՝ պայմանավորված երեխաներին հանդիպած դժվարություններով: Հաշվի առեք, որ նրանք հնարավոր է խուսափեն բարդությունների մասին խոսելուց: Կարևոր է զինվել համբերությամբ, եթե նկատում եք, որ երեխաները դժվարանում են, խորհուրդ տվեք հավաքել մտքերը, և արտահայտվել վերջում: Պատրաստ եղեք հուզական արձագանքի, հնարավոր է երեխաների նկատառումները խիստ անձնական բնույթ կրեն:

Միջառարկայական կապեր

Կենսաբանություն - Ֆիզիկական տարբերություններից խոսելիս ավելի բարձր տարիքային խմբերում շատ արդյունավետ կլինի հաշմանդամությունը կապել մարդու անատոմիայի թեմաների հետ, որպեսզի սովորողները առավել հիմնավոր հասկանան այդ տարբերությունները:
ՆԶՊ - Այս առարկայի շրջանակում ուսումնասիրվող ֆիզիկական անվտանգ միջավայրին վերաբերող թեմաները և բովանդակությունը շատ արդյունավետ կլինի կապել տարածքի ֆիզիկական հարմարեցումների թեմային: Առաջարկվում է նաև համատեղ աշխատանք կատարել:

ԹԵՄԱ 9

Զինված հակամարտություններից պաշտպանված լինելու իրավունք

Նպատակը: Թեմայի ուսուցման նպատակն է սովորողների մեջ ձևավորել զինված հակամարտությունները ֆիզիկապես ճանաչելու կարողություն:

Ուսումնառության վերջնարդյունքներ

Թեմայի ուսուցման ավարտին.

- Սովորողները սահմանում են, թե ինչ է պատերազմը[16]:
- Սովորողները կարողանում են պատերազմը վերափոխել խաղաղության և մեկնաբանել պատերազմի ու խաղաղության կապը:

Թեմայի բովանդակությունը

Վերջին տասնամյակներին աշխարհն ականատես եղավ զինված հակամարտությունների աճող վտանգներին, որոնք թիրախավորում են երեխաներին: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 38-րդ հոդվածով նախատեսված պարտականություններն ապահովում են այն երեխաների պաշտպանությունը և խնամքը, որոնց կյանքի բնականոն ընթացքը խախտվել է զինված հակամարտությունների պատճառով: Մեր օրերում զինված հակամարտությունը կամ պատերազմը դադարել է միայն ժամանակավոր ռազմական գործողություն կամ երկրում անկայուն իրավիճակ լինելուց: Այսօրվա հակամարտությունները մի շարք խախտումներ են ենթադրում, երբ հատկապես երեխաները դառնում են առավել խոցելի բռնության ու չարաշահումների համատեքստում: Հակամարտող պետություններում շեշտադրվում է ռեսուրսները ռազմական գործողություններին ուղղելու միտումը՝ ստեղծելով պատերազմող տնտեսություններ՝ անտեսելով մարդկանց և հատկապես երեխաների հիմնական կարիքները: Այսպես, երեխաները երկարատև զինված հակամարտություններում զրկվում են որակյալ կյանքից, կրթությունից, հանգստից և առհասարակ մանկությունից ու բազմաթիվ այլ իրավունքներից ու ազատություններից:

Միջազգային հումանիտար իրավունքում երեխաները զինված հակամարտություններում դիտարկվում են որպես խաղաղ բնակչություն կամ պատանդներ՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը և կարիքները:

ՄԱԿ ԱԽ-ի կողմից ընդունվել են երեխաների և զինված հակամարտությունների վերաբերյալ մի շարք բանաձևեր: Համաձայն վերոնշյալ միջազգային կարգավորումների՝ զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածությունը կարող է լինել երկու տեսակի՝ զինված

[16] ՀՊՉՀ31, ՀՊՉՀ36 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788,:

հակամարտությունների անմիջական մասնակիցներ՝ զինվոր երեխաներ, և հակամարտություններից տուժած երեխաներ: Զինված ուժերի կամ խմբերի հետ առնչվող երեխաների վերաբերյալ սկզբունքները և ուղեցույցները, որոնք առավել հայտնի են որպես Փարիզյան սկզբունքներ, տալիս են զինվոր երեխայի սահմանումը, համաձայն որի՝ զինվոր է այն երեխան, որը առնչություն ունի զինված ուժերի կամ խմբավորումների հետ, որի տարիքը ցածր է 18-ից, որը, անկախ սեռից, ներգրավվել կամ զինված խմբավորումներում ծառայել է որպես մարտիկ, խոհարար, զինակիր, լրտես կամ սեռական նպատակներով: Սակայն միջազգային իրավունքն առհասարակ առաջնահերթություն է տալիս զինվոր երեխաների զորացրմանը՝ նրանց տրամադրելու անհրաժեշտ աջակցություն և վերականգնում, որպեսզի կարողանան վերադառնալ երեխաների համար բնականոն կյանքին[17]:

Հաշվի առնելով միջազգային քրեական և մարդու իրավունքների նորմերը, ինչպես նաև ՄԱԿ ԱԽ բանաձևերում զինված հակամարտությունների ընթացքում երեխաների իրավունքների հարցում պետությունների պարտավորությունների բնույթի փոփոխությունը, զինված հակամարտությունների ենթատեքստում երեխային պետք է դիտարկել միայն որպես զոհ, այլ ոչ հրահրող կամ մասնակից:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանք 9.1.
Պատերազմից խաղաղություն

Առաջադրանքը նախատեսված է **8-12 տարեկան** երեխաների համար:

Խաղ-վարժանքի **նպատակն է** սովորողների մեջ ձևավորել ֆիզիկապես վտանգն ու վտանգող միջավայրը զգալու հմտություն և ուսումնասիրել, թե ինչպես բացասական իրավիճակից անցնել դրական իրավիճակի սուղ միջոցներով:

Աշխատանքի համար անհրաժեշտ ժամաքանակը՝ **մեկ դասաժամ:**

Գործնական աշխատանքի ընթացքը

Դասարանը բաժանեք երկու հավասար մասի: Սովորողների մի մասը մարմնավորելու է արձաններ: Մյուս կեսը միջամտելու է արձանները նոր իրավիճակներին հարմարեցնելու համար՝ ստեղծելու նոր իրավիճակ ու նոր հնարավորություն:
Սկզբում, երբ երեխաները խմբերի դեռևս բաժանված չեն, վերցրեք մեծ թուղթ ու գրիչ: Այնուհետև երեխաներին տվեք պատերազմի վերաբերյալ հարցեր: Կարող են հնչել հետևյալ հարցերը.

[17] Միջազգային կարմիր խաչի և մահիկի ընկերություն, Տարեկան զեկույց, 2010, էջ 43:

- Ի՞նչ է «պատերազմը»:
- Ինչի՞ մասին ես մտածում, երբ լսում ես «պատերազմ» բառը:
- Ի՞նչ գույն ունի պատերազմը:
- Ո՞րն է պատերազմի հականիշը:

Մեծ թղթի վրա գրեք երեխաների ասածները, որպեսզի այն դառնա բառերի և մտքերի կոլաժ:
Այնուհետև երեխաները բաժանվում են երկու հոգանոց խմբերի: Երեխաներից մեկին հրահանգվում է «սառել»/անշարժ մնալ մի դիրքում, քանդակի պես, երբ լսում է «պատերազմ» բառը: Իր դիրքն ընդունելուց հետո դիտարկող ընկերոջը հրահանգեք վերափոխել ընկերոջ դիրքը/քանդակն այնպես, որ այն խորհրդանշի պատերազմի հականիշը:
Երբեմն պատերազմից խաղաղության հասնելու համար հնարավոր է նվազագույն փոփոխություն կատարել: Օրինակ, եթե երեխան գտնվում է այնպիսի դիրքում, որ ցուցադրում է մեկնած զենքով մարդու, ընկերը կարող է հեշտությամբ փոխել շարժումն ու զենքը կվերածվի մեկնած ձեռքի:
Թույլ տվեք, որ երեխաները հերթով լինեն պատերազմական դիրք/կեցվածք կերտողի և «մեկ խաղաղ լուծում» գտնողի դերերում: Երբ դերերը փոխվել են մոտ երեք անգամ, բոլոր երեխաները նորից հավաքվում են մեծ թղթի շուրջը և կրկին մտորում «Ո՞րն է պատերազմի հակառակը» հարցի մասին: Գրի առեք երեխաների մտքերը, հետո կարելի է համեմատել, թե ինչ մտքեր են ունեցել երեխաները վարժությունից առաջ և հետո:

Ուսուցչի նշումները

Կարևոր է մտապահել, որ յուրաքանչյուր վարժություն կատարելու ժամանակ բոլոր երեխաների համար գործելու են նույն պայմանները: Փորձեք դիտարկել դասական շարժումներից զատ այլ շարժումներ և խաղալ մարմնով: Շեշտեք, որ չկա ճիշտ կամ սխալ դիրք, և յուրաքանչյուր ոք շարժվելու է իր մարմնի կարողությունների համաձայն: Խրախուսեք երեխաներին ուսումնասիրել իրենց և մյուսների մարմնի շարժումները և գործի դնել իրենց երևակայությունը:

Ուսուցչի մեկնաբանություններ

Հնարավոր է՝ կարիք լինի երեխաներին բացատրելու, թե ինչ է պատերազմը կամ ինչու են առաջանում պատերազմները: Պատերազմական գոտում գտնվող երեխաների պարագայում թեման ծայրահեղ զգայուն է: Հնարավոր է լինեն անկանխատեսելի հուզական արձագանքներ: Ուշադիր պետք է լինել յուրաքանչյուրի նկատմամբ, քանի որ կան երեխաներ, որոնց հուզականությունը վառ արտահայտված չէ, ուստի կարևոր է պարբերաբար ճշգրտումներ կատարել, որպեսզի երեխաների հուզականությունը չչարաշահվի: Արձանները մարմնավորելիս աշխատեք խուսափել երեխաների անձնական խնդիրների հետ նույնականացումից:

Հավելված 1. Նախավարժանքներ

1. Աչքերի կոնտակտ

Երեխաները կանգնում են շրջանով: Խնդրեք նրանց աչքերի միջոցով կապ հաստատել դասարանի անդամներից որևէ մեկի հետ: Երբ երկու դասընկեր իրար նայելիս կլինեն, պետք է փոխեն տեղերը ՝ պահելով աչքերի կոնտակտը: Միաժամանակ կարող են տեղափոխվել մի քանի զույգ: Կարևոր է փորձել խաղն իրականացնել լուռ՝ առանց խոսելու: Երեխաները շրջանի մեջտեղում հայտնվելով՝ կարող են նաև իրար ողջունել: Մի քանի րոպե անց խաղի տեմպն ավելի է արագանում: Վարժանքը կիրառելի չէ ծանր տեսողական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում: Տևում է մինչև 5 րոպե:

2. Ի՞նչն է ընդհանուր

Ուսուցիչը նշում է բնութագրիչներ և խնդրում այդ բնութագրիչն ունեցող երեխաներին հավաքվել մեջտեղում: Օրինակ՝ թո՛ղ տեղաշարժվեն այն բոլոր երեխաները, որոնց հագուստի վրա կա կարմիր գույն կամ բոլոր նրանք, ովքեր այսօր առավոտյան լավ ծիծաղել են: Երեխաներին ևս առաջարկեք բնութագրիչներ ավելացնել: Վարժանքը տևում է մինչև 5 րոպե:

3. Արևը ժպտում է

Երեխաները նստում են փոքր շրջանով: Աշակերտներից մեկը նստում է մեջտեղում և ասում. «Արևը շողում է նրանց, ովքեր հիմա ժպտում են, աչքերը փակել են, ձեռքով շարժում արեցին, տխուր են, ունեն գունավոր շապիկ .....և այլն»: Այն բոլոր աշակերտները, որոնք համապատասխանում են թվարկվածին, արագ տեղերը փոխում են, իսկ այն մասնակիցը, որը մնում է առանց աթոռի, շարունակում է՝ ասելով. «Արևը շողում է նրանց.....»: Վարժանքը տևում է մինչև 5 րոպե:

4. Խմբային արձան

Խնդրեք երեխաներին պտտվել սենյակում, ձգելով մարմինը դեպի վերև, դեպի կողք, մարզելով մարմինն այնպես ինչպես կարող են: Շարժման ընթացքում հնչեցրեք որևէ բառ, օրինակ՝ ամպ, տերև, քար և այլն, և խնդրեք երեխաներին միավորվել և իրենց մարմիններով ստանալ այդ բառի պատկերը: Դուք կարող եք ցուցադրել մեկ օրինակ, որպեսզի երեխաներն ավելի լավ պատկերացնեն: Կրկնեք մի քանի անգամ: Վարժանքը տևում է մինչև 10 րոպե:

5. Նարնջի հյութ

Խնդրեք մասնակիցներին կանգնել կամ նստել՝ ինչպես իրենց հարմար է: Ապա խնդրեք, որ բոլորը պատկերացնեն, որ իրենց դիմաց մեծ նարնջի ծառ է, և վրան կան հասած նարինջներ: Այժմ խնդրեք, որ բոլոր երեխաները ձգվեն դեպի նարինջները: Ասեք, որ նարինջներին հասնելու համար պետք է մի քիչ ձգվել: Շարունակեք այնքան մինչև կզգաք, որ երեխաները լավ ձգել են իրենց մարմինը՝ իրենց հարմար դիրքից: Այսպես կատարում ենք առնվազն

3-4 նարնջի համար: Ապա, երբ կլինեն բավարար քանակով նարինջներ, խնդրեք, որ երեխաները պատկերացնեն, որ լավ սեղմում են ու հյութ քամում նարնջից (կամ ձեռքերը ամուր իրար սեղմելով կամ այնպես, ինչպես իրենց հարմար է): Եվ վերջում պատկերացնում են, որ խմում են հյութը:

6. Երեխաներին խնդրեք շրջան կազմել: Խնդրեք նրանց պատկերացնել, որ իրենց ձեռքում նապաստակ կա: Խնդրեք երեխաներին նկարագրել նապաստակին իրենց բառերով և փոխանցել աջ կողմում կանգնածին, ու այդպես ամբողջ շրջանով: Երեխաներից ոմանք շատ նուրբ կվարվեն նապաստակի հետ, ոմանք էլ՝ ոչ այնքան: Եթե նկատեք կոպիտ վարմունք, հորդորեք երեխաներին ավելի մեղմ վարվել՝ ասելով, որ նապաստակը փափուկ է, փոքրիկ է, քնել է ուզում և այլն: Երբ նապաստակին փոխանցեն և ավարտեն շրջանը, խնդրեք երեխաներին նույն գործողությունն անել իրենցից աջ կանգնած ընկերոջ հետ, ինչ արել էին նապաստակի նկատմամբ: Վարժանքը տևում է մինչև 10 րոպե:

SUMMARY

Inclusion through art: child rights education toolkit

This toolkit consists of lesson plans and practical exercises related to the nine child rights, designed for children at all levels of general education. The practical exercises have been developed based on the principles of inclusivity, co-creation, and the teaching of children's rights. The toolkit aims to support educators in teaching children about their rights in a more accessible and comprehensible manner. Additionally, it seeks to assist teachers in using more playful, creative, and accessible materials and approaches. During the development of the toolkit, the authors took into consideration the educational objectives, psychological characteristics and needs of children, as well as the goal of imparting knowledge about children's rights in a more accessible language.

РЕЗЮМЕ

Инклюзивность посредством искусства: пособие по обучению правам детей.

Данное пособие предлагает план уроков и практических работ, связанных с правами детей (девять прав), и оно предназначено для всех уровней общеобразовательной школы. Практические работы созданы на основе принципов инклюзивности, сотворчества и обучения правам детей. Инструментарий призван помочь учащимся изучить свои права на более доступном и понятном языке. Кроме того, пособие направлено на то, чтобы помочь учителям больше использовать игровые, творческие и другие доступные материалы и подходы. При разработке инструментария авторы учитывали образовательные цели, психологические особенности и потребности детей, а также задачи обучения правам детей на более доступном языке.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դեմիրչյան Գայանե, ՀՀ փաստաբանների պալատ և ՅՈՒՆԻՍԵՖ, «Երեխայի լավագույն շահը» ուղեցույց-ձեռնարկ, www://www.unicef.org/media/12766:
2. Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների կրթության «Կողմնացույց» երիտասարդական ձեռնարկ, 2009 թ.:
3. Երեխաների իրավունքների մասին հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն No 13 (2011 թ.):
4. Երեխայի իրավունքների մասին հանձնաժողով, Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն, 2005 թ.:
5. Էյվա արվեստների հիմնադրամ, ՅՈՒՆԻՍԵՖ, «Ես երեխա եմ» երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 2020 թ, https://www.unicef.org/armenia/media/11111/file/%D4%B5%D5%BD%20%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%20%D5%A5%D5%B4.pdf:
6. Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Ինոչենտի հետազոտական կենտրոն, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, «Աշխատանքային գրքույկ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար», 2022 թ:
7. ՀՀ Կառավարություն, Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:
8. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Արվեստ առարկայից ՝՝ առարկայական չափորոշիչ, 2023 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=176074:
9. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, Բանաձև 2427, 2018 թ.:
10. ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, նոյեմբեր, 1989 թ.:
11. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողով, Փարիզյան սկզբունքներ, 2007 թ.:
12. Միջազգային կարմիր խաչի ընկերություն, Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ Ժնևի 1949 թ.-ի կոնվենցիաներին կից լրացուցիչ արձանագրություն, 1977 թ.:
13. Միջազգային կարմիր խաչի և մահիկի ընկերություն, Տարեկան զեկույց, 2010 թ.:
14. Միջազգային քրեական դատարան, Հռոմի կանոնադրություն, 2002 թ.:
15. ՅՈՒՆԻՍԵՖ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, «Եկեք սովորենք երեխայի իրավունքները», ուղեցույց ուսուցիչների համար, 2021 թ., www.unicef.org/Armenia%:
16. Նովակ Մանֆրեդ, Ազատությունից զրկված երեխաների վերաբերյալ համաշխարհային ուսումնասիրություն, 2019 թ.:
17. Վորլդ Վիժն Հայաստան, ԿԽՄՖ, ՅՈՒՆԻՍԵՖ, «Մարդասիրական օգնության պայմաններում երեխայակենտրոն միջավայրի վարժությունների հավաքածու», 2021 թ., www/unicef.org/armenia:
18. Amnesty International, First Steps, Activities to explore human rights 3-5

years, 2017, https://www.amnesty.org.uk/files/2017-03/First%20Steps%20-%20Teacher%20Resource.pdf?VersionId=p8tq95Xon_P9p5iIqNUKVb3ttovdLCUB.
19. Earth beat, Children's Rights lesson plans, 2013. https://earthbeat.sk.ca/pdf/lessonplan/worldbeat/2013/10/Childrens-Rights-4-5-lessons.pdf.
20. LEGO foundation, Right to Play, P.O.W.E.R., Games for Child Development and Learning, 2021, https://righttoplay.com/en/landing/power-games/.
21. My body is my body Foundation, Child Abuse Prevention Guidelines, https://www.mybodyismybody.com/if-it-don-t-feel-right.
22. Oxfam Education, Learn About Right to Education, 2021. https://oxfamilibrary.openrepository.com/bitstream/handle/10546/621154/edu-education-home-learning-activities-230221-en.pdf?sequence=6&isAllowed=y.
23. Rafiki, Teaching materials, https://pedagog.rafiki.se/lektionbarnkonventionen-artikel-9-ak-2-4/.
24. The Advocates for Human Rights , The Right to Health, Lesson Plan: Equal Access to Health Care in the United States, Grade Level: 8-12, 2010, https://www.theadvocatesforhumanrights.org/Res/right_to_health_care_lesson_plan.pdf.
25. UN, Practical activities for primary and secondary schools, Teaching Human Rights Practical activities for primary and secondary schools, 2004, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/ABCen.pdf.
26. UNICEF Canada, Getting Ready to Vote: Classroom activities for children's rights, 1999, https://archives.studentscommission.ca/pdf/rights.pdf.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մարիամ Մուրադյան, Սերինե Ավետիսյան
Տաթևիկ Աբրահամյան, Կարին Սթայվեր

ՆԵՐԱՌՈՒՄ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ
Երեխաների իրավունքների ուսուցման ձեռնարկ

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Ն. Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Ն Հարությունյանի
Կազմի նկարի հեղինակ՝ Մանե Ղազարյան
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյանի

Տպագրվել է «ՊրինտԱրմ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Անդրանիկի 94 շ., 26 բն.

Ստորագրված է տպագրության՝ 18.09.2023:
Չափսը՝ : Տպ. մամուլը՝ :
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am